

Արցախի Հանրապետության օկուպացիայի հետևանքով արձանագրված նյութական կորուստների վիճակագրությունը՝ 12 քաղաք, 241 գյուղ, 13550 տուն (որոնց 30 տոկոսն ավելի քան 100-ամյա հնության), 11450 բնակարան, 60 ֆաբրիկա, 15 գործարան, 200 մշակույթի տուն, 9 մշակույթի կենտրոն, 25 թանգարան, 232 դպրոց, 7 քոլեջ, 4 համալսարան, 11 արվեստի դպրոց, 400 միջնադարյան գերեզմանոց, 385 եկեղեցի, 60 վանական համալիր, 2385 խաչքար, 4 ջրամբար, 5 ջրանցք, 37 հիդրոէլեկտրակայան, 48 հանք, 11 հիվանդանոց, 230 բուժկետ... (Ցանկը հիմնված է «Ջենեսիս Արմենիա» ուղեղային կենտրոնի հիմնադրամի հետազոտության վրա)

Երեքշաբթի
22 հոկտեմբերի 2024թ.
№ 18 (627)

ՀԻՄՆԱԿԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
«ՍՅՈՒՆԻՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓՈՒԿ
ՊԱՏԱՍԿԱՆԱՏՎՈՒԹՅԱՐ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ:
ԳԻԼԸ՝ 100 ԴՐԱՄ

3301, Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան 20/32:
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47
syuniacyerkir@mail.ru



Սյունյաց Երկիր

www.syuniacyerkir.am



«Արաքսի միջանցք»-ին ծանոթանալուց հետո երիցս ակնհայտ դարձավ՝ «Չանգեզուրի միջանցք»-ը խաբեական ծրագիր է և ընդդեմ Հայաստանի

Այսպես կոչված Չանգեզուրի միջանցք ստեղծելու գաղափարը՝ Արցախյան երրորդ պատերազմից և Արցախում հայերի ցեղասպանություն իրականացնելուց հետո, դարձել է աշխարհաբաղաբազան գլխավոր հարցերից մեկը: Չկա օր, որ այդ մասին մոլորակի ուժային ու բաղաբազան կենտրոններից և Թուրքիայից ու Ադրբեջանից խոսակցություններ չլսենք:

Ժամանակներ առաջ անդրադարձել ենք Չանգեզուրի միջանցք կոչված գաղափարի հանդեպ տարածաշրջանում գլխավոր խաղացողների դիրքորոշմանը՝ առանձին-առանձին: Այսօր ուզում ենք հավելյալ ուշադրություն հրավիրել խնդրի առարկայի հանդեպ Իրանի Իսլամական Հանրապետության դիրքորոշմանը: Այդ երկրի պետական բարձրաստիճան բազմաթիվ պաշտոնյաներ պնդել և պնդում են՝

այսպես կոչված Չանգեզուրի միջանցքի հետ կապված ծրագիրը ոչ մի պարագայում չի կարող իրագործվել, ինչի համար բազմաթիվ լրջագույն պատճառներ են Նշվում: Սյուն կողմից՝ Իրանը դեմ չէ, որ Սյունիքի տարածքով վերաբացվեն հաղորդակցության ուղիներն Ադրբեջանի ու Նախիջևանի միջև, բայց վերաբացվող հաղորդակցության ուղիները բացառապես պետք է լինեն Հայաստանի Հանրապետության ինքնիշխանության ներքո, **Շարունակությունը՝ էջ 5**

ԼՍԻՄԵՆ

«...Իրապես լուրջ մտահոգություններ կան, որ Ադրբեջանը կփորձի նոր ռազմական ծրագրեր իրականացնել Հայաստանի տարածքների դեմ: Օրինակ, ադրբեջանական կողմն այժմ օգտագործում է «Արևմտյան Ադրբեջան» նարատիվը, որը, ինչպես գիտեք, համընկնում է Հայաստանի Հանրապետության գրեթե ողջ տարածքին», - ասել է ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը:

02.10.2024 Թ.

ՀՀ-ի և ՌԴ-ի միջև համաձայնություն է ձեռք բերվել այն մասին, որ 2025 թ. հունվարի 1-ից Հայաստան-Իրան և Հայաստան-Թուրքիա պետական սահմանի պահպանությանը կմասնակցեն նաև ՀՀ ԱԱԾ սահմանապահ զորքերը, իսկ Հայաստան-Իրան պետական սահմանի հսկիչ-սահմանային կետում ծառայությունն ամբողջությամբ կիրականացնեն ՀՀ ԱԱԾ սահմանապահ զորքերը:

Իրանի նախագահն Ադրբեջանի փոխվարչապետի հետ հանդիպմանը հայտարարել է, որ ոչ մի պետության ինքնիշխանությունը չպետք է անտեսվի, սակայն զգուշացրել է տարածաշրջանում դրսի կողմից այլացողարմ ստեղծելու սարսափելի հետևանքների մասին:

«Ադրբեջանից շատ հաճախ փորձ է արվում տպավորություն ստեղծել, թե նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարության 9-րդ կետն Ադրբեջանի արևմտյան շրջանների և Նախիջևանի կապի մասին է: Դա այդպես չէ: Այդ կապը 9-րդ կետի ենթավերնագիր է: Իսկ 9-րդ կետը տարածաշրջանի բոլոր տնտեսական և տրանսպորտային կապուղիների ապաշրջափակման մասին է և մեկը մյուսից անջատ քննարկելն անտրամաբանական է և անհնար: Ավելին, նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարության որևէ կետում որևէ տեղ չկա, որ Հայաստանի Հանրապետության որևէ ինքնիշխան իրավագործություն որևէ կերպ սահմանափակվելու է, որ ՀՀ 1 քմ տարածքի վրա որևէ ուրիշ երկիր սահմանելու է որոշակի վերահսկողություն: Չկա նման բան ընդհանրապես»- ասել է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը:

12.10.2024 Թ.

Մեղրի քաղաքը՝ ԱՊՀ մշակութային մայրաքաղաք 2026 թվականին

ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի քաղաքին 2026 թ. «ԱՊՀ մշակութային մայրաքաղաքի» պատվավոր կարգավիճակ կտրվի: Այդ մասին որոշումն ընդունվել է Մոսկվայում ԱՊՀ մասնակից պետությունների ԱԳ նախարարների խորհրդի նիստի ժամանակ:

Տեղեկությունը հայտնում է ՀՀ արտաքին գործերի նախարարության մամուլի ծառայությունը: «Նիստի արդյունքներով ՀՀ մասնակցությամբ ընդունվող փաստաթղթերից նախարար Միրզոյանն անդրադարձել է Մեղրի քաղաքին 2026 թվականին «ԱՊՀ մշակութային մայրաքաղաքի» պատվավոր կարգավիճակ տալու որոշմանը՝ ընդգծելով նաև քաղաքի հնագույն մշակութային ժառանգությունը»,-

ասված է գերատեսչության հաղորդագրության մեջ: Անդրադառնալով Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակի 80-ամյակի առիթով 2025 թ. անցկացվելիք միջոցառումներին՝ ՀՀ ԱԳ նախարարը շեշտել է ֆաշիզմի, ռասսայական խտրականության, անհանդուրժողականության դեմ պայքարում հայ ժողովրդի ունեցած ներդրումը: **07.10.2024 Թ.**





Ներքին Հանդը՝ Լինել- չլինելու սպառնալիքին դեմ հանդիման



Ներքին Հանդը Հայաստանի Կապան համայնքի գյուղ է, որը 3 կողմից շրջափակված է ադրբեջանական 2 տասնյակից ավելի զինված դիրքերով, միայն այստեղ Հայաստանի տարածքից օկուպացված է 2700 հեկտար:

Մենք ապացույցներով արձանագրել ենք Ներքին Հանդի բնակիչների նկատմամբ ադրբեջանական հանցանքների լրացուցիչ փաստեր՝ Հայաստանի «Շիկահող» պետական արգելոցում հազարավոր ծառահատումներ ու տասնյակ կիլոմետրերով կառուցվող ռազմական ճանապարհներ, տեղադրված բազմաթիվ ակամներ (ադրբեջանական 2 դիրքի օրինակով), խմելու ջրից բնակիչներին զրկելը, զինված դիրքեր քաղաքացիական տների անփիչական հարևանությամբ և այլն:

Ադրբեջանն անցկացնում է շրջակա միջավայրին վերաբերող COP 29 միջոցառումը, մինչդեռ հենց ինքն ավերում է Հայաստանի շրջակա միջավայրը. այս փաստերը պետք է հնարավորինս ներկայացնել աշխարհի հարթակներում՝ ցույց տալու համար ադրբեջանական իրական մտադրությունները:

ԱՐՄԱՆ ԹԱԹԻՅԱՆ
09.10.2024 Թ.

Ադրբեջանցիները, օկուպացնելով Սյունիքի տարածքները, մեծ քանակությամբ ապօրինի հատումներ են իրականացրել Շիկահողի արգելոցում՝ կատարելով ինժեներական աշխատանքներ: Այս փաստը «Առավոտի» հետ զրույցում հաստատեց Կապան համայնքի ղեկավար Գևորգ Փարսյանը: Ադրբեջանական կողմի գործողությունների հետևանքով «Շիկահող» պետական արգելոցը վտանգված է: «Մեծ քանակությամբ հատումներ են իրականացվում Շիկահող պետական արգելոցում: Իրենք ինժեներական կառույցներ ու ճանապարհներ են կառուցում, ամրանում են, խրամատներ են փորում: Այսինքն՝ մեծ վնասներ են հասցնում նաև Էկոհամակարգին», - ասաց Փարսյանը:

Նա հիշեցրեց, որ Կապան քաղաքն ու համայնքի 18 գյուղական բնակավայրեր սահմանամերձ են համարվում 2021 թվականի դեկտեմբերի 18-ից հետո: Իսկ 2022 թվականի ռազմական գործողությունների հետևանքով ադրբեջանցիներն օկուպացրել են համայնքի տարածքները: Ըստ Փարսյանի՝ լուծումն այն է, որ ադրբեջանցիները պետք է հետ բաշվեն այդ տարածքներից: «Մենք սահմանների հետ

կապված խնդիրներ ունենք, հատկապես Ներքին Հանդում է իրավիճակը մտահոգիչ: 2022 թվականի սեպտեմբերյան ադրեսայի հետևանքով մեր վարչական տարածքներից մոտ 2700 հա հող օկուպացված է ադրբեջանցիների կողմից, և հիմա ադրբեջանական զորքերն են տեղակայված մեր տարածքներում: Բնականաբար, այդ իրավիճակը մտահոգիչ է, ներկայում բնակչության մոտ ավելի շատ անորոշության մթնոլորտ է՝ կապված ընդհանուր իրավիճակի հետ»,- ասաց նա: Ըստ Փարսյանի, սակայն, Կապան համայնքից արտագաղթ չկա:

Գևորգ Փարսյանն անդրադարձավ Ներքին Հանդ գյուղում առկա իրավիճակին:

«Ներքին Հանդ բնակավայրը երեք կողմից շրջափակված է ու շրջապատված ադրբեջանական զորքերով: Կենսական նշանակություն ունեցող ռեսուրսներն ամբողջովին գտնվում են ադրբեջանական զորքերի վերահսկողության ներքո: Խմելու ջրի ակունքներն են անցել նրանց վերահսկողության տակ, նաև՝ գյուղի



զերեզմանոցը: Մարդիկ գյուղի եկեղեցի այցելելու հնարավորություն չունեն: Այս իրավիճակը 2022 թվականի սեպտեմբերի մարտական գործողությունների հետևանք է: Ներքին Հանդում իրավիճակը բավական լուրջ է»,- ասաց նա:

Փարսյանի տեղեկացմամբ՝ նախկինում հաճախակի էին կրակոցի ձայներ լսվում Ներքին Հանդում, հիմա, թեև կրակոցի ձայներ չկան, բայց ժամանակ առ ժամանակ լսվում են ակամների պայթյունի ձայներ: Համայնքի ղեկավարն ասաց, որ չնայած այս իրավիճակին, գյուղից մշտական բնակչության արտագաղթ չի եղել, բայց գյուղացիներն անհանգիստ են: «Միանշանակ՝ ադրբեջանցիները պետք է հետ բաշվեն Ներքին Հանդից, ես լուծումն այլ կերպ չեմ էլ պատկերացնում: Նրանք պետք է հեռանան, հակառակ դեպքում գյուղը որպես գյուղ չի կարող մնալ: Գյուղից մնացել է միայն զուտ բնակելի հատվածը՝ տների հատվածը: Գյուղում դպրոց կա, բայց դպրոցը նույնպես գտնվում է ադրբեջանցիների նշանառության ներքո»,- ընդգծեց նա: Փարսյանը նաև ասաց, որ Սյունիքում սահմանազատման հետ կապված որևէ խոսակցություն մինչ այսօր չկա, համենայնդեպս ինքը նման տեղեկություն չունի:

ՌՈՇԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
28.09.2024Թ.



Նախարար Գնել Սանոսյանը Կապանի լեռնահարստացման կոմբինատում

Հ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար Գնել Սանոսյանը, ընդերքօգտագործման ոլորտը համակարգող փոխնախարար Հովհաննես Հարությունյանը և Սյունիքի մարզպետ Ռոբերտ Դուրյանը 2024 թ. սեպտեմբերի 28-ին այցելեցին «Կապանի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲ ընկերության լեռնահանքային համալիր: Ընկերության գլխավոր տնօրեն Սասուն Ավետիսյանի ուղեկցությամբ իյուրերը եղան արտադրական տարածքներում, ծանոթացան կոմբինատի բնականոն գործունեությանը, իրականացվող ներդրումային ծրագրերին, լայնապրոֆիլ բարեփոխումների ընթացքին, անվտանգային և այլ միջոցառումներին: Հյուրերին անվտանգության իրահանգավորման գործընթացների վերաբերյալ հակիրճ զեկույց ներկայացնելուց հետո կազմակերպվեց շրջայց նաև ստորգետնյա հանքում, որտեղ ընկերության մասնագետները

Նախարարին ներկայացրեցին նաև հանքի խնդրահարույց հարցերը՝ դրանց վերաբերվող աշխատանքային փաստաթղթերը և իրականացման գործընթացը:

«Կապանի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲ ընկերությունը կարևորում է ՀՀ կառավարության քաղաքականությունն ընդերքօգտագործման ոլորտում, ինչպես և ցուցաբերվող ուշադրությունը տնտեսվարող սուբյեկտների գործունեությանը, նրանց խնդիրներին և պետություն - մասնավոր երկխոսությունն առողջ ու կառուցողական հուսով զարգացմանը:

«Կապանի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲ ընկերությունը գոհունակություն է հայտնում այցելության և կազմակերպված բազմաբովանդակ բնակարկման կապակցությամբ:

30.09.2024 Թ.



Կայացել է «Mining Armenia» միջազգային երկօրյա համաժողովը՝ միավորելով ոլորտի առաջատար խոսնակներին

Հայաստանի հանքարդյունաբերական ներուժի բացահայտմանն ուղղված երկօրյա միջազգային համաժողովը՝ «Mining Armenia Forum»-ը, միավորել էր պետական կառույցների, մասնագիտական հանրության, մասնավոր դաշտի և ներդրումային ընկերությունների շուրջ 200 ներկայացուցիչների մեկ հարթակում: Պատվաստված էին նաև արտադրության, առաջատար տեխնոլոգիայի, հարցազրույցների ձևաչափով անցկացվող համաժողովին մասնակցել են առաջատար խոսնակներ ոչ միայն Հայաստանից, այլև Մեծ Բրիտանիայից, Կանադայից, Ղազախստանից: Հանքարդյունաբերության հանդեպ հանրային վստահության վերականգնման, պետություն-մասնագիտական հանրության-մասնավոր համագործակցությամբ ոլորտի խնդիրների բարձրաձայնման

և լուծման առաջարկների ներկայացման, ինչպես նաև գլոբալ ներդրումային հնարավորությունների բնակարկման այս ձևաչափը հավակնում է դառնալ շարունակական:

Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար Գնել Սանոսյանը համաժողովի բացման իր ելույթում նշել է, որ Հայաստանը որդեգրել է կայուն զարգացման քաղաքականություն, որի խնդիրն է ապահովել հավասարակշռված տնտեսական զարգացում: «Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտն ազգային տնտեսության մեջ ունի առանցքային մասնաբաժին, այն մեր երկրի արդյունաբերության և արտահանման կարևորագույն ուղղություններից մեկն է: Ոլորտը հանրապետությունում ունի զարգացման և

Շարունակությունը՝ էջ 4



Իրանցի շինարարները կառուցում են Ազարակ-Քաջարան մայրուղին, որ Յյուսիս-հարավի 4-րդ տրանսի մի հատվածն է

Քաջարան-Ազարակ ճանապարհահատվածի (Ազարակ-Վարդանիձոր-Քաջարանի նախատեսվող թունելի մուտք) կառուցումը ֆինանսավորվում է Հայաստանի Հանրապետության ու Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամի միջոցներով: Նախատեսվում է կառուցել շուրջ 32 կմ ընդհանուր երկարությամբ ճանապարհահատված (Ազարակ-Վարդանիձոր-Քաջարանի նախատեսվող թունելի մուտք):

Քաջարան-Ազարակ հատվածի մանրամասն նախագծման համար 2018 թվականին հայտարարվել է միջազգային մրցույթ: 2019 թվականի փետրվարին մրցույթի արդյունքներն ամփոփվել են: 2021 թվականին նախագծման աշխատանքներն ավարտվել են:

Հայտարարվել է Ազարակից Վարդանիձոր մոտ 21 կմ ճանապարհահատվածի հիմնադրամաս և Վարդանիձորից մինչև թունելի ելք մոտ 11 կմ ճանապարհի կառուցման շինարարական աշխատանքների ձեռքբերման մրցույթ: Կապալառու կազմակերպությունն է իրանական երկու կազմակերպություններից բաղկացած «Abad Rahan Pars International Group և Tunnel Sadd Ariana» ՉՃ-ն: Կապալառուի հետ շինաշխատանքների իրականացման պայմանագիր կնքվել է 23.10.2023 թ.:

14.11.2023 թ. Institute IGH, Joint-Stock Company for Research and Development in Civil Engineering (Croatia)-ի հետ «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամը ստորագրել է Քաջարան-Ազարակ 32 կմ ճանապարհի շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման պայմանագիրը:

Քաջարան-Ազարակ ճանապարհահատվածի շինաշխատանքները մեկնարկել են 2024 թ. սկզբին:

Սեպտեմբերի 24-ին «Սյունյաց երկիր» ստեղծագործական խումբը կառուցվող ճանապարհի շինարարականներում էր:

Այստեղ էլ գրույց ունեցանք շինարարությունն իրականացնող կազմակերպությունների ներկայացուցիչ, տեխնիկական տնօրեն Ալի Ռեզա Բայաթի հետ:

Պարոն Բայաթ, նախ՝ շնորհակալություն այս հանդիպման հնարավորության համար: Մենք, իհարկե, ընդհանուր պատկերացում ունենք Յյուսիս-հարավ կառուցվող մայրուղու և դրա տրանս 4-ի բոլոր հատվածների մասին, բայց, իբրև սկիզբ, ճշտենք՝ որտե՞ղ ենք հիմա մենք

ռուցել ենք աշխատանքային մեր մարտավարությունը: Սյուս կողմից՝ Տաջիկստանում էլ նման բարդ տեղանքում ճանապարհ ենք կառուցել: Այնպես որ՝ անթերի կկատարենք մեր առջև դրված խնդիրը, հավատացնում ենք:

– Մենք հաճախ ենք այցելում Մեդրի և տեսնում ենք, որ գործի էք դրել ճանապարհաշինության ոլորտի ժամանակակից տեխնիկական միջոցներ:

– Ճիշտ էք նկատել: Ամեն աշխատանք սկսելուց, բնականաբար, ուսումնասիրում և հաշվարկում ենք, թե ինչ տեխնիկա է մեզ անհրաժեշտ լինելու տվյալ վայրում: Նոր նախագծեր սկսելուց, շատ հաճախ, նոր ու հա-



գտնվում:

– Մենք հիմա Իրանի սահման-Քաջարան կամ Ազարակ-Քաջարանի մուտք կառուցվող ճանապարհի բազայում ենք՝ Մեդրի բաղաձայն կից: Մեր կողմից կառուցվող ճանապարհը 32 կմ երկարություն կունենա: Դա Յյուսիս-հարավի ամենալայնակիր հատվածներից է:

– Ե՞րբ էք սկսել աշխատանքները:

– 2024-ի տարեկազմին: Առաջին երեք ամսում նախապատրաստական աշխատանքներ ենք կատարել, իսկ մայիս ամսից սկսել ենք բուն ճանապարհաշինությունը, որը, ըստ պայմանագրի, պիտի ավարտենք 2027 թվականին:

– Կհասցնե՞ք ավարտել սահմանված ժամկետում:

– Մեր կազմակերպությունն աշխարհի շատ երկրներում է աշխատել՝ Տանզանիայից մինչև Վրաստան: Եվ նախորդ տարիների փորձից ելնելով կարող ենք ասել՝ այո, կհասցնենք պայմանագրով սահմանված ժամկետում և բարձր որակով շահագործման հանձնել նշված ճանապարհահատվածը:

– Արդեն ծանոթ էք տեղանքին, Ազարակ-Քաջարան հատվածը, առանց չափազանցության, Հայաստանի ամենաբարդ ռելիեֆ ունեցող տարածքներից է: Արդյո՞ք դա Ձեզ չի վախեցնում:

– Երբ մենք մասնակցում էինք մրցույթին՝ արդեն գիտեինք, թե ինչ տեղանքի հետ ենք գործ ունենալու, նախագծող ճարտարապետն էլ ամենակարգից մեզ բացատրություններ տվեց և զգուշացրեց: Դրա հիման վրա էլ կա-

մապատասխան տեխնիկա ենք ձեռք բերում: Այս նախագիծը սկսելուց էլ նման մոտեցում ենք ցուցաբերել, ներկա պահին 150 միավոր տեխնիկա է աշխատում այստեղ: Մեր կենտրոնական գրասենյակում, որ գտնվում է Թեհրանում, ունենք աշխատանքային մի խումբ, որ միայն այդ հարցով է զբաղվում: Մեզ մոտ՝ ընթացքում խնդիրներ առաջանալու դեպքում, տեղեկացնում ենք աշխատանքային այդ խմբին, և իրենք համապատասխան գնումներ են կատարում ու տրամադրում մեզ:

– Իսկ ինչպե՞ս էք լուծում աշխատուժի և հատկապես մասնագետ կադրերի հարցը: Արդյո՞ք բոլոր աշխատողներին Իրանի հսկամական Հանրապետությունից էք բերել, թե՞ տեղական ռեսուրսից նույնպես օգտվում էք:

– Մեր ընկերության բաղաձայնությունն այսպես է՝ ամեն մի երկրում, որտեղ աշխատում ենք, աշխատուժի 60-70 տոկոսը տեղի ռեսուրսից ենք համալրում, 30-40 տոկոսը մեր մասնագետներն են: Այդ սկզբունքով ենք առաջնորդվում՝ նաև այստեղ: Դա ողջամիտ մոտեցում է՝ եւ զբաղվածության խնդիր ենք լուծում տարածաշրջանում, եւ փորձի փոխանակում կատարում: Այսօրվա դրությամբ 170 աշխատող է ընդգրկված նախագծում:

– Ճանապարհաշինության մեջ, սովորաբար, նախագծերի փոփոխություն անհրաժեշտություն է առաջանում, առավել ևս այսպիսի բարդ տեղանքներում: Արդյո՞ք նման խնդիրների բախվել էք

կամ բախվում էք:

– Իսկապես, երբ դու կատարողական դաշտում ես, թղթի վրա արտահայտված գծագրերն ու տեղանքի առանձնահատկությունները երբեմն իրար չեն համընկնում:

Իհարկե, ձգտում ենք առավելագույնս հավատարիմ մնալ նախագծին, բայց ժամանակ առ ժամանակ ստիպված ենք լինում նախագծային փոփոխությունների դիմել: Ժամանակի գործոնն էլ կարևոր է, որոշ դեպքերում փոփոխությունն արվում է՝ ժամանակ խնայելու խնդրից ելնելով:

– Համագործակցությունը համայնքային իշխանության, համայնքային կազմակերպությունների և տեղի բնակչության հետ. հետաքրքիր է...

– Անցած ամիսների ընթացքում բավականին լավ համագործակցություն է ձևավորվել թե՛ տեղի իշխանության, թե՛ բնակչության հետ, շնորհակալ ենք նրանցից:

Նման դրական համագործակցությունը բնական է, աշխատանքից հետո էլ շփվում ենք ժողովրդի հետ, ծանոթանում Մեդրու տարածաշրջանի մշակույթին, մեղրեցիների կենցաղին:

Առհասարակ ուրախ ենք այս նախագիծն իրականացնելու համար: Դա հնարավորություն է, որ ավելի մոտիկից ծանոթանանք բարեկամ հայ ժողովրդին:

Կառուցվող այս ճանապարհը, համոզված ենք, կլինի ոչ թե սոսկ հարողորակցության ուղի, այլև տարածաշրջանի անվտանգության ապահովման, ինչպես և երկու ժողովրդի բարեկամության խորհրդանիշ:

– Կառուցվող ճանապարհի վերաբերյալ մի քանի տեխնիկական տվյալ կուզենայինք իմանալ, որը հնարավորություն կտա մեզ՝ ընդհանրական պատկերացում կազմել մայրուղու այս հատվածի մասին:

– Ճանապարհը կունենա 17 կամուրջ՝ երեք կմ ընդհանուր երկարությամբ: Կունենանք երկու թունել՝ յուրաքանչյուրը 1 կմ երկարությամբ: Խաչմերուկները հինգն են, որոնք նույն հարթության վրա չեն լինի:

Մի շարք տեղերում հենապատեր կկառուցվեն՝ ճանապարհը հնարավոր սողանքներից պաշտպանելու համար: Արդյունքում, եթե հիմա Մեդրիից Քաջարան ենք հասնում մոտ 40 րոպեում, ապա նոր ճանապարհը հնարավորություն կտա 20 րոպեում տեղ հասնել:

– Դուք բավականին դրական արտահայտվեցիք համայնքային իշխանության հետ Ձեր ունեցած հարաբերությունների մասին: Ունե՞ք կոնկրետ, գործնական համագործակցության օրինակներ:

– Ծրագրեր ունենք, առայժմ միայն բարեկարգել ենք քաղաքի գերեզմանոցին կից տարածքը:

– Քիչ առաջ եղանք ձեր կազմակերպություն այստեղ գտնվող լաբորատորիայում, ի՞նչ խնդիրներ է լուծում լաբորատորիան:

– Ցանկացած շինանյութ, որն օգտագործում ենք այստեղ, պետք է նախապես ուսումնասիրվի ու գնահատվի՝ որակի առումով՝ քարի տեսակներ, քիմիական նյութեր, ցեմենտ...

– Տեսնում ենք, որ կառուցվող ճանապարհը շատ դեպքերում անցնում է մեղրեցիներին պատկանող մասնավոր տարածքներով: Բնակիչների հետ հարաբերությունները՝ այդ հարցով, կարգավորված են, թե՞ չլուծված խնդիրներ դեռևս կան:

– Տարածքը, որտեղ իրականացնում ենք ճանապարհաշինություն, կոչվում է կանաչ գոտի: Այդ գոտուն առկա միջավայրի ու Տարածքային կառավարման և Ենթակառուցվածքների նախարարությունները:

Ձեզ հետաքրքրող հարցերը նախապես լուծվել են. եղել են և՛ պետական, և՛ մասնավոր հողատարածքներ: Բոլոր դեպքերում նման հարցերը մեր գործառնությունների տիրույթում չեն:

– Նորից շնորհակալություն այս հանդիպման և հարցազրույցի համար: Կարծում եմ՝ հետագայում նորից հանդիպումներ կունենանք: Կարևոր նախագիծ էք իրականացնում, ձեզ հաջողություններ:

– Մեր կազմակերպությունների անունից Ձեզ շնորհակալություն՝ կարևոր այս կառուցիչ շինարարությամբ հետաքրքրվելու և մեր աշխատանքները լուսաբանելու համար:

ՀԱՐՑԱԶՈՐԻՑԸ՝ ՍԱՍՎԵԼ ԱՆԵՍՆԱՅԱՆԻ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐԸ՝ ՇՈՒՀԱՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ



ՀՀ-ում Ռուսաստանի արտակարգ և լիազոր դեսպան Ս. Կոպիրկինը՝ «Սյունյաց երկրի» խմբագրությունում

Հայաստանի Հանրապետությունում Ռուսաստանի Դաշնության արտակարգ և լիազոր դեսպան Սերգեյ Կոպիրկինը, ով երկօրյա այցով Սյունիքի մարզում էր, սեպտեմբերի 18-ին այցելեց «Սյունյաց երկիր» թերթի խմբագրություն:

հայ-ռուսական հարաբերությունների ներկա վիճակի մասին: Այդ ելույթում հնչեցված հարցերը պահպանում են իրենց արդիականությունն ու կարևորությունը և կրկնելու կարիք չկա, – ասաց Սամվել Ալեքսանյանը:

դեկտեմբերին՝ փորձելով նրան ներկայացնել արդեթանական և ոչ գիտական ընկալումների լուրջ ներքո, ինչը, անշուշտ, ամոթալի է: – Սյունիքում մեծ անհանգստությամբ են հետևում այսպես կոչված շանգհայի միջանցքի շուրջ վերջին զարգացումներին: Եթե ոմանց համար դա պետական կամ քաղաքական, կամ ինչ-ինչ շահերի հարց է, ապա սյունեցիներին համար՝ մեր հազարամյա բնօրրանում ապահով և անվտանգ ապրելու խնդիր, – ասաց Ս. Ալեքսանյանը:

Կայացել է «Mining Armenia» միջազգային երկօրյա համաժողովը՝ միավորելով ոլորտի առաջատար խոսնակներին

Սկիզբը՝ էջ 2
տնտեսական աճի խթանման էական հեռանկարներ: Այս միջոցառումը լավ հնարավորություն է ոչ միայն քննարկելու և վեր հանելու Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտի մարտահրավերները, զարգացման հեռանկարներն ու հնարավորությունները, այլ նաև կայուն, նորարար տեսլական ձևավորելու համար»,- ընդգծել է նախարարը:



միջազգային փորձագիտական միտքը՝ մենթորականում ենք լուծումներ առաջարկել Հայաստանում կայուն և նվազագույն ռիսկերով հանքարդյունաբերական գործունեությունն ծավալելու համար»,- ասել է Հայաստանի հանքագործների և մետալուրգների միության նախագահ, ՀՊՄԿ գլխավոր տնօրենի առաջին տեղակալ Վարդան Տիգրանյանը:

«Այսօր նավթ և գազ չունեցող երկրները, ինչպես օրինակ Հայաստանը, մրցակցային հնարավորություն են ստացել, որ նախկինում չեն ունեցել: Հանքարդյունաբերության զարգացումն այլընտրանք չունի ոչ միայն Հայաստանում, այլև ամբողջ աշխարհում, քանի որ մաքուր տեխնոլոգիաներին անցումը պահանջում է ավելի մեծ ծավալի հանքարդյունաբերական նյութերի արդյունահանում: Մինչև 2050 թվականն էլեկտրական մեքենաներով հագեցվածություն գրեթե նպատակահարմար էր հասնելու համար տարբեր հաշվարկներով անհրաժեշտ կլինի 80 տոկոսով ավելացնել պղնձի համաշխարհային արտադրությունը», – նշել է

դեռևս չի պնդել այն ամենը, ինչ շրջանառվում է մամուլում:
Միջանցքի շուրջ աղմուկը, որ հրահրված է Արևմուտքի կողմից, կոնկրետ նպատակ ունի, որը նոր չէ՝ ամեն գնով ՌԴ-ին դուրս մղել տարածաշրջանից և ոչ թե խնդիր լուծել ՀՀ-ի կամ հայ ժողովրդի շահերին համապատասխան:
Հայ-ռուսական հարաբերությունների ներկա ոչ սովորական իրավիճակը պայմանավորված է Արցախում տեղի ունեցած ողբերգական իրադարձություններով: Բայց այդ ամենը, ըստ դեսպանի, հետևանք է այն իրողության, որ հայկական կողմը 2022 թ. հոկտեմբերի 6-ին Արցախը ճանաչեց Ադրբեջանի մաս:
Սերգեյ Կոպիրկինը կարևորեց հայ-ռուսական բազմադարյա բարեկամությունը, նշեց ՌԴ-ի շահագրգռվածությունը՝ տարածաշրջանում ապահովելու կայուն և երկարատև խաղաղություն, խաղաղ միջոցներով լուծելու հայ-ադրբեջանական հարաբերություններում առկա հարցերը՝ վերստին նշելով Ռուսաստանի Դաշնության պատրաստակամությունը՝ նպաստելու այդ խնդիրների կարգավորմանը:
Վերջում Ս. Ալեքսանյանը, հիմք ընդունելով վերջերս անցկացված հարցախոսքը, նշեց՝ «Սյունեցիների մեծ մասը բարձր է գնահատում ժողովուրդների հետ մեր բարեկամությունը, այդ թվում՝ հայ-ռուսական բազմադարյա բարեկամությունը, սակայն դեմ է երկրի արտաքին քաղաքական վերլուծողի փոփոխությանը և երկրամասի անվտանգությունն ու լիակատարությունը (պատմական ներկա հակասական փուլում հատկապես) պայմանավորում է Ռուսաստանի Դաշնության և Իրանի Իսլամական Հանրապետության հետ ռազմաքաղաքական հարաբերությունները սերտացնելու մեջ: Չեմ կարծում, որ որևէ մեկը, անգամ ամենաբարձր պետական պաշտոնյաներն իրավունք ունեն դարերի ընթացքում ձևավորված այդ բարեկամությունը, երկու ժողովրդի միջև ձևավորված վստահությունն ու մարդկային անկեղծ զգացմունքները մատաղ անել թուրքիայի և Ադրբեջանի արյունոտ ոտքերի տակ»:
Հ.Գ. ՀՀ-ում ՌԴ արտակարգ և լիազոր դեսպան Սերգեյ Կոպիրկինին հյուրընկալել են Կապանի համայնքապետ Վևորգ Փարսյանը, Զաջարանի համայնքապետ Մանվել Փարամազյանը, Մեղրիի համայնքապետ Խաչատուր Անդրեասյանը: Դեսպանն այցելել է նաև ՀԱԴԳ Կապանի մասնաճյուղ և հայ-իրանական սահման, որտեղ տեղակայված է ՌԴ ԱԴՏ 127-րդ սահմանապահ ջոկատը:

Սյունիքը և ռուսական ֆենոմենը

Արտաբերելով ռուս բառը՝ սյունեցին իր խոհերի մեջ այն գուգորդում է ազգային համերաշխության, ուժի և մշակույթի հետ:

ՈՐՔԵՐՑ ԷՅԱՆԱՆՑԻ (ԳՐԻԳՈՐՅԱՆ)



Դարերի հոլովոյթում ռուս բառն ակնածանքի ներուժով անխափիր դրոշմվել է մեր անցյալ ու ներկա ժամանակների հարահուփ վրա: Մեր բարբառը հագեցած է ռուսերեն բազմաթիվ բառերով: Ներկա բոլոր սերունդների համար ռուսերենը մատչելի է, իսկ ուսյալները տիրապետում են գրավոր ռուսերենին: Տարեցներն իրենց պատմությունը երբեմն ժամանակագրում են ռուսական ցարերի անունով՝ Նիկոլային դարվին, Ալեքսանդրի դարվին և այլն:

Պետրոս Մեծի ժամանակներից, մահմեդական բռնության ճիրաններից մեջ գտնվելով, սյունեցիները բաղձանքով սպասել են ռուսներին: Դեռ Բակուլուցն է տարեգրել, որ արդարություն գտնելու համար մեր նախնիները նամակ են գրել ռուսաց թագավորին: Ցարին ենթարկվելուց հետո մեր ռազմատենչ երիտասարդությունը վերագտել է իրեն ռուսական բանակում, վիպելու արժանի սիրանքներ գործել, կայացել է ռուսական զենք գործածելիս և ազատագրել իր հայրենիքը:

Երբ ռուսները եկել են թուրքերի հետ, մեծ սյունեցին՝ Նոյեմբեր, զգուշացրեց բողոքով՝ դավադրության մասին, որը համոզիչ իմաստավորվեց տասնամյակներ անց: Ահա, Սյունիքի երկու դարը նաև ռուսական է: Դավիթ-Բեկի իշխանությունից հետո շատ սյունեցիներ գաղթեցին Ռուսաստան, համայնեցին Ղազարը, Մոզորկը, Աստրախանը, անգամ Մոսկվան: Յետո, երբ Գրիբոյեդովն ու Պուշկինն անցան մեր կողմերով, ռուս մուժիկներ եկան ու գյուղեր հիմնեցին Սյունիքում:

Հիմա, երբ տեղ-տեղ սյունեցու հարսը կամ փեսան ռուս է, ընդունվում է սովորականի նման: Ազգագործեն հետաքրքիր փաստ է, որ վաղ անցյալից՝ սիրահարված հայ տղաներն իրենց մարմնի վրա դաջում են Կատյա, Վալյա, Նատաշա, Վերա, Կյուբա և նման գեղեցկահունչ անուններ: Թերևս իզուր էր կատակում Պետրոս թագավորը, երբ ասում էր, թե օտարին հարս գնացած ռուս կնոջից ռուսներ են ծնվում: Գոնե Սյունիքի օրինակով դա թագավորավայել կռահում չէ: Սյունիքում հարս եկած ռուս կանայք երևելի հայրենասեր հայ զավակներ են տվել...

Երբ են հայերն առաջին անգամ տեսել ռուսներին կամ հաղորդակցվել նրանց հետ, ինչպե՞ս են նախապես կոչել նրանց:

Հնագույն հիշատակությունները, անշուշտ, մեր կողմերին են: 10-րդ դարում պատմիչ Մովսես Դասխուրանցին, որ Կաղանկատվացու շարունակողն է, հաղորդելով Պարսկաստան-Հայաստան ու Աղվանք արշաված ղեկավարների մասին, գրում է. «Հյուսիսային կողմերից հայտնվում է այլակրոն, անծանոթ մի ցեղ, որին ռուզիկ են անվանում, սրանք, ոչ ավելի, քան երեք ժամ ընթանալով, մրրկի նման համատարած Կասպից աշխարհածովի ելքով հանկարծ հասան Աղվանքի Պարտավ մայրաքաղաքը» (Կղնկ. էջ 264):

Կասկած չկա, որ այս հիշատակման ռուզիկները ռուսներն են, որոնք, անշուշտ, նավարկել են Աթլ (Վոլգա) գետով, որի մեծությունն ու գեղեցկությունը զարմանքով

նկարագրել է Կիրակոս Գանձակեցին:

Ըստ լեզվաբանների՝ ռուս լեզուն ծագում է հին սլավոնական Քոզ կամ Քոզգեղանունից: Այլ մի ստուգաբանությամբ՝ շեկ կամ կարմրավուն է նշանակում: Բյուզանդական, հայկական և ռուսական միջնադարյան աղբյուրների վկայությամբ՝ Արլ. Հայաստանի վերջին՝ Բաղդ կամ Կասանի թագավորությունը (970-1170) առևտրական կապեր ուներ Կիևյան Ռուսիայի հետ: Սյունեցի վաճառականները հասել են մինչև Կամա-վոլգյան միջազգեք, մինչև Բոլգար քաղաք: Մանբերման (Կիև) երկրում հիմնել են գաղթօջախ: Վաղի-միր-սուզդալյան իշխան Անդրեյ Բոգոլյուբսկու զորաջոկատներից մեկն ուղարկվել է՝ գործելու սելջուկ Շամսեդին Ելտուզի դեմ՝ ի պաշտպանություն պաշարված Բաղաբերդի, սակայն տեղ չի հասել անհայտ պատճառներով:

Պարզ է, որ 12-րդ դարից հայ-ռուսական առևտրային հարաբերությունների զարգացմամբ ի հայտ է եկել ռուսական դիվանագիտություն՝ Անդրկովկասյան ազդեցության ոլորտ դարձնելու հեռանկարը:

12-րդ դարում հայ եկեղեցին իր ինքնուրույնությունից զրկելու միջազգային ոտնձգությունների դեմ անհաշտ պայքար էր մղում Գր. Տուստերովին և կոչ անում դիմել ռուս ժողովրդին՝ «Քրիստոնեությամբ պատուեալ

Սյունիքի մարզը Հայաստանի Հանրապետության այն տարածաշրջաններից է, որ համարվում է հայ-ռուսական բարեկամության բնօրրան, հայ ժողովրդի ռուսական կողմնորոշման սկզբնավայր:

Այդ համագործակցությունը դարեր շարունակ (բազմաթիվ հակասություններով ու վիճելի հարցերով հանդերձ) եղել է մեր ժողովրդի առաջընթացի գրավականներից:

Ներկայումս, սակայն, կասկածի տակ է առնվում (մի շարք պատճառների մղումով) այդ բարեկամությունը: Երկու ժողովուրդների բազմադարյա բարեկամության լուսավոր էջերի մասին խոսելը նույնիսկ անընդունելի է հանրության մի հատվածի համար:

Սյունիքի շուրջ 2020 թ. նոյեմբերի 9-ից և հատկապես դեկտեմբերի 18-ից հետո ստեղծված ռազմաքաղաքական նոր իրավիճակը (որն առավել սրվեց Ադրբեջանի՝ 2021 թ. մայիսյան և նոյեմբերյան, 2022 թ. մարտյան ու սեպտեմբերյան, 2023 թ. մարտ-ապրիլյան ագրեսիայից հետո), նաև անորոշության մշուշը, երկրամասի ապագայի հարցում չդադարող շահարկումները, Ադրբեջանի ծավալապաշտական նկրտումներն ու սպառնալիքները, կարծում ենք, հրամայական են դարձրել հայ-ռուսական հարաբերությունների մասին անկեղծ խոսակցության վարումը:

Այդ նպատակն է հետապնդում «Սյունյաց երկիր» հերթական համարի սույն հավելվածը:



Անգեղակոթի ժողով

մեծափառ եկեղեցին ընդազգ»: Սա միջնադարյան հայ իրականության՝ հյուսիսից օգնություն ակնկալելու առաջին փաստն է: Ռուս ժողովրդին իրենց ստեղծագործություններում անդրադարձել են միջնադարյան հայ տաղերգուներ Ֆրիկը, Հովհաննես Սարկավազը, Նահապետ Քուչակը: 15-17րդ դարերում Մոսկվան այնքան հռչակավոր էր, որ մեր տաղերգուները այն բարձր են դասել Հռոմից: Ուշագրավ է, որ 12-րդ դարում հայերեն է թարգմանվել «Բորիսի և Գլեբի վարքը»:

Հայ-ռուսական հարաբերությունները 17-րդ դարի 2-րդ կեսին վերածել էին քաղաքա-

կան կապերի (1678 թ. Էջմիածնի գաղտնի խորհրդակցությունը): Դրանք բարձր աստիճանի հասան Պետրոս Մեծի օրոք:

Ռուսամետ հոսանքի եռանդուն շատագույլ և կարկառուն գաղափարախոսն Իսրայել Օրին է (1659-1711): Նրա գործունեությամբ հայ դիվանագիտության ավանդույթները աննախընթաց, նոր փայլ ստացան: Ժողովրդի համար բախտորոշ ժամանակաշրջանում նա մեր դիվանագիտության համալսարանն էր՝ միջազգային անցուղարձերի խոր իմացության և իրադարձությունների վրա ներազդելու ճկունությամբ և հմուտությամբ: Անշուշտ, Օրին և նրա համախոհների մտածողության մեջ չէր իշխում մահմեդական իշխողների հեռավոր հյուսիսի քրիստոնյա իշխողով փոխարինելու գաղափարը: Ռուսական կողմնորոշումը հայ ժողովրդի՝ իր պետականությունը հաստատելու մեծ հույսեր ուներ:

Օրին մեր հայրենակիցն է, սյունեցի: Կաթոլիկ բարոզիչ Կրուսնևսկին Օրինի ծննդավայր է նշել Ղափանը, Լեոն՝ Ղափանի անհայտ գյուղերից մեկը: Նրան համարել են նաև Նախիջևանցի, վայոցձորեցի՝ սերված Պոռչյան տոհմից:

Օրինի մասին առաջին անգամ ընդարձակ ուսումնասիրություն է տվել ռուս նշանավոր պատմաբան Ս. Սոլովյովը 1868 թ. (18-րդ հատոր): Նրա եվրոպական գործունեության մասին 1893 թ. Սյունիքում դասախոսություն է կարդացել պրոֆ. Հայգելը, որը նրան համարել է Դյուսելդորֆի հայ վաճառական:

17-րդ դարի վերջին հայ ժողովուրդը ոչ միայն կեղեքվում էր պարսկաստանյան գավթիչների կողմից, այլև մեծ չափերով ենթարկվում ազգային ճշմունքի ու հայածանքների: Պարսից ֆեոդալական մասնատվածության պայմաններում խաները մասնավորապես Ղարաբաղում ու Սյունիքում հայերի հետ վարվում էին անպատմելի դաժանություններով, խստացնում հարկերը, ստիպում կրոնափոխ լինել: Հայրենիքն ազատագրելու գործով Օրին զբաղվում է անգլիական գերությունից ազատվելուց հետո: Հաստատվելով Դյուսելդորֆում՝ նա ծանոթանում է Պֆայցի կուրֆյուրստ Հովհան Կիլիեմի հետ, որն Ավստրիայի Լեոպոլդ կայսեր քենակալն էր: Կուրֆյուրստը Օրինի միջոցով նամակներ է ուղարկում հայ մելիքներին, ինչպես նաև վրաց իշխանին՝ Օրինի բանակցությունների համար լիազորություններ տալու վերաբերյալ: 1699 թ. Օրին Անգե-



Հայաստանը Ռուսաստանի հետ միավորվելու 150-ամյակին նվիրված հուշահամալիր Արփյան քաղաքում, 1978 թ., քանդակագործ՝ Սարգիս Բաղդասարյանը

Թուրքմենչայի պայմանագիրը

Յաշտոնյան պայմանագիր Ռուսաստանի և Պարսկաստանի միջև, որով ավարտվել է 1826-28-ի ռուս-պարսկական պատերազմը: Կնքվել է փետրվարի 10 (22)-ին, Թուրքմենչայ գյուղում (Թավրիզի մոտ): Ռուսաստանի կողմից ստորագրել է Ի. Տ. Պասկևիչը, Պարսկաստանի կողմից՝ Աբբաս Միրզան: Պայմանագրի մշակմանը մասնակցել է Ա. Ս. Գրիբոյեդովը: Թուրքմենչայի պայմանագիրը բաղկացած էր 16 հոդվածից: Պարսկաստանը պաշտոնապես ճանաչում էր Երևանի ու Նախիջևանի խանությունների և Օրդուբադի գավառի միացումը Ռուսաստանին, պարտավորվում 20 մլն ռ. արծաթով ռազմատուգանք վճարել: Ռուսական և պարսկական առևտրական նավերին ազատ նավարկության իրավունք էր տրվում Կասպից ծովում, իսկ ռազմական նավատորմ պահելու բացառիկ իրավունքը վերապահվում էր միայն Ռուսաստանին: Ռուսական կառավարությունը Աբբաս Միրզային ճանաչում էր Պարսկաստանի գահաժառանգ: Պարսկաստանի տիրապետության տակ մնացած հայերին իրավունք էր տրվում գաղթել ռուսական տիրապետության տարածքները:

սում, նպաստեց ռուսական ազդեցության ուժեղացմանը Միջին Արևելքում և խախտեց Անգլիայի դիրքերը Իրանում: Պայմանագիրը հատկապես բախտորոշ եղավ հայ ժողովրդի համար: Արևելյան Չայաստանը միացավ Ռուսաստանին, հայ ժողովրդի արևելյան հատվածն իր բախտը կապեց ռուս մեծ ժողովրդի հետ: Այս առումով, միջազգային ոչ մի պայմանագիր թերևս այնպիսի դեր չի խաղացել հայ ժողովրդի կյանքում, ինչպես Թուրքմենչայի պայմանագիրը:

Թուրքմենչայի պայմանագրի 3-րդ, 12-րդ և 15-րդ հոդվածները.

Յոդ. 3. Երբին Մեծությունը Պարսկական Շահը իր անուկից և իր թագաժառանգների և ժառանգորդների անուկից Ռուսական կայսրությանն է զիջում որպես նրա կատարյալ սեփականությունը Երևանի խանությունը՝ Արաքսի այս և այն կողմերում և Նախիջևանի խանությունը: Այս զիջման հետևանքով Երևանի Մեծությունը Շահը խոստանում է սույն պայմանագրի ստորագրման օրից հաշված վեց ամիս ոչ ավելի ժամանակամիջոցում ռուսական իշխանություններին հանձնել այն դիվաններն ու



յան սահմանները: Գաղթի համար սահմանվում էր 1 տարի ժամանակ, որի ընթացքում գաղթականները կարող էին իրենց հետ վերցնել շարժական գույքը, անշարժ գույքը վաճառելու կամ սեփական հայեցողությամբ տնօրինելու համար տրվում էր 5 տարի ժամանակ (1828-29-ին Պարսկաստանից Անդրկովկաս ներգաղթեց շուրջ 45 հզ. հայ): Կնքվեց նաև առևտրական համաձայնագիր, որով ռուսական վաճառականները ազատ առևտրի իրավունք էին ստանում Պարսկաստանում:

Թուրքմենչայի պայմանագիրն ամրապնդեց Ռուսաստանի դիրքերը Անդրկովկասում:

իրապարակված վավերագրերը, որոնք վերաբերում են վերոհիշյալ երկու խանությունների կառավարմանը:

Յոդ. 12. Յոգուտ երկու տերությունների հպատակների, պայմանավորվող բարձր կողմերը որոշում են նրանց ընդհանուր համաձայնությամբ՝ Արաքսի երկու կողմերում անշարժ գույք ունեցողներին տալ եռամյա պայմանաժամ, որի ընթացքում նրանք կարող են ազատ վաճառել կամ փոխանակել իրենց անշարժ գույքը, բայց Երևանի Մեծությունը և մեծայն ռուսաց Կայսրը որչափ վերաբերում է իրեն, սույն *Շարունակությունը՝ էջ 4*



Ձմեռվա իրիկունը

Հողմը մեզով երկինքն առնում,
Գալարում է բուքը ձյան,
Մին՝ մանկան պես լաց է լինում,
Մին՝ ոռնում է զերթ գազան:
Մին՝ վայրենի սուլում պես-պես,
Աղմկում է տանիքում,
Մին՝ ուշացած ճամփորդ, ասես,
Լուսամուտն է նա թակում:

Մեր խրճիթը աղքատ ու հին,
Ե՛վ մրթին է, և՛ տըխուր.
— Ի՞նչ ես նրատել պատի տակին,
Իմ պառավըս, էդպես լուռ:
Հոգնե՛լ ես դու փոթորիկի
Ոռնոցներից խելագար,
Թե՛ նիրհում ես քո իլիկի
Բրզզոցի տակ միալար:

Արի խրմենք, բարի ընկեր
Իմ սև, ջահել օրերի,
Խրմենք դարդից, բաժակող բեր,
Սիրտներըս բաց կըլինի:
Երգիր, հնց էր ապրում խաղաղ
Հավքը ծովի էն ափին,
Երգիր, հնց էր աղջիկը վաղ
Ջուրը գնում մինչ արփին:

Հողմը մեզով երկինքն առնում,
Գալարում է բուքը ձյան,
Մին՝ մանկան պես լաց է լինում,
Մին՝ ոռնում է զերթ գազան:
— Արի խմենք, բարի ընկեր
Իմ սև՝ ջահել օրերի,
Խրմենք դարդից, բաժակող բեր,
Սիրտներըս բաց կըլինի:

ԹԱՐԳՍԱՆՈՒԹՅՈՒՆ՝ ՀՈՎՅԱՆՆԵՍ
ԹՈՒՄԱՆՅԱՆԻ



Ֆայտունչին

Շրջոնքված վայրում մուսուլմանական,
Բարձր լեռնանցքում՝ մշուշով լի,
Քե՛ք էինք անում մահվան հետ անգամ,
Ինչպես երազում զարհուրելի:
Ոմն ֆայտունչի մեզ բաժին ընկավ.
Դեմքը խարկված էր, որպես չամիչ,
Դա դիվանքների ախպերն էր և կամ
Կարճիկ ու նոթոս մի հարամի:
Խոսվածքն՝ արարի, հնչյունները՝ բարդ,
Անիմաստ կանչեր մերթ-մերթ հանում —
Որպես մի դողոշ կամ որպես մի վարդ
Դաբաղած դեմքն էր ծուլ պահպանում.
Դիմազները կոծկած սուկայի
Արնաշեշտ մաշկի դիմակի տակ —
Քշում էր, — բայց հիւ, — կառքը քառանիվ
Վայրենի ճիչով՝ խռպոտ ու տաք:
Նորից թափավազք, խթան, ցնցումներ,
Եվ անհար էր իջնել սարից.
Պարույր գծեցին ֆայտունչները մեր,
Իջևաններն են պտույտ գալիս...
Ես սթափվեցի. բարեկամ, կանգնիր,
Մեզ ձիերի հետ, — գլխի ընկա, —
Մոլորեցրել է, գործը տանի,
Ոմն ժանտախտի մի նախագահ:
Մետաղալարից մտրակ է հյուսել,
Վարում է կառքը՝ խրախճացած,
Որ պտույտ գործի որպես կարուսել
Քաղցր ու թթվահամ հողը ճաքած...
Ես Ղարաբաղը տեսա լեռնային,
Տեսա գիշատիչ Շուշի քաղաք,
Որ ճաշակեցի սարսափներ մահի —
Հոգուս խռովքին համանվազ:
Քառասուն հազար մեռյալ լուսամուտ,
Ակնախոռոչներ մութ, սնամեջ.
Դառը տքնանքի բոժոժը հմուտ
Թաղված էր այնտեղ՝ լեռների մեջ:
Անամոթաբար շառագունում են
Մերկ տներն ու վեր նայում անթարթ,
Երկինքը վերից մեզն իր մանում է,
Որպես մուգ-կապույտ ոմն ժանտախտ:

ՕՍԻՊ ՄԱՆԴԵԼՏՍԱՅ
ԲԱՆԱՍԵՂՈՒԹՅՈՒՆ ԱՐՁԱԳԱՆԷ Է
1920 Թ. ՀՈՒՇԻԻ ՀԱՅՎԱԿԱՆ ՉԱՐԴԵՐԻ:
ԹԱՐԳՍԱՆՈՒԹՅՈՒՆ՝ ՀՈՎՅԱՆ
ԲԵՅԼԵՐՅԱՆԻ:

Սյունիքը և ռուսական ֆենոմենը

Սկզբը՝ էջ 5

դակոթ՝ Մելիք Սաֆրազի մոտ է գալիս (սա Էջմիածնի ժողովի մասնակից էր): Էջմիածնի և Աղվանքի (Գանձասարի) կաթողիկոսներից մերժում ստանալուց հետո նա Անգեղակոթում հակառակ պատկերն է տեսնում: Մելիքների ժողովը նամակ է գրում Պֆայց: Նամակը հետագայում պատճենվում ու ներկայացվում է Պետրոս Մեծին, որովհետև ինչպես պարզվել էր, կուրֆյուրստի շահադիտական հետաքրքրություններն առաջնահերթ էին հայերի ճակատագրից: Նամակի վերաբերմամբ մենք գործ ունենք Սյունիքի (Ղարաբաղի) հոյժ հետաքրքիր մի դիրքորոշման հետ: Մելիքներն իրենց գրած թղթերի մեջ իրենց անվանում էին. «Մենք՝ մեծ Հայաստանի գլխավորներս և ատենակալներս»:

Սա ցույց է տալիս, որ Սյունիքի հայ մելիքներն իրենց տեր էին ճանաչում ողջ Հայաստանի վրա:

1701 թ. հուլիսի 25-ին Օրին իր ծրագիրը ներկայացնում է Պետրոս Մեծին: Թագավորը գրավոր ոչ մի խոստում չի անում, բայց

բանավոր հուսադրում է: Նա հայ դիվանագետին տալիս է կառք ու թիկնապահներ, շնորհում գնդապետի աստիճան և 50 հոգանոց շքախմբով որպես դեսպան ուղարկում Պարսկաստան: 18-րդ դարը Ռուսաստանում նաև նշանավորվում է հայ ժողովրդի նկատմամբ եղած հետաքրքրությունների վերելքով: Հայ ուսյալներն ավելի շատ են ներգրավվում ռուսական մշակույթի և գիտությունների մեջ: Ռուսիայում Ի. Օրինի հետևում է հայագրի քաղաքագետների բազումը:

Ցարական արքունիքը սկսել էր տարբերակված ըմբռնել Կովկասը: «Ամեն կերպ աշխատեցե՛ք հայերին հրավիրել, իսկ մուսուլմանների թիվը որքան հնարավոր է պակասեցնել, բայց այնպիսի գաղտնի միջոցներով, որ իրենք ոչինչ չհասկանան»,- գրել է Պետրոս Ա-ն Մատյուշկինին:

Ցարական կառավարությանը հայերը պետք էին հատկապես արտադրական ուժերի գաղափարն առնելով: Այդ քաղաքականությունը խրախուսել սկսել էր դեռ Ալեքսեյ Միխայլովիչ ցարը: Պատմագրությանը հայտ-

նի են Պարսկաստանից ներգաղթած հայերի համար արտոնությունների սահմանման՝ ցարական 1667, 1711, 1725, 1744, 1762, 1764, 1765, 1768, 1779, 1797, 1799, 1802թթ. հրամանագրերը:

Ռուսական կողմորոշման համար մեծ հարված էր Պետրոս Ա-ի մահը (1725 թ.) Դավիթ Բեկի իշխանության հաստատման տարիներին: Այդ ժամանակներից էլ հայտնի է Միսիթար սպարապետի՝ ռուսաց արքունիքին գրած նամակը:

Անդրկովկասին տիրելը եղել է Պետրոս Ա-ի նվաճողական քաղաքականության առանցքային խնդիրներից մեկը, որի կենսագործման համար մեծ ջանքեր է ներդրել Եկատերինա կայսրուհին: Անկախ Հայաստանի անունը շրջանառվել է նրա կառավարման տարիներին: Ծրագիրը մշակել են Հովսեփ արքեպ. Արղությանը և Հովհաննես Լազարյանը: Կայսրուհու հրամանով ծրագրի կենսագործմանը ծանոթացել է մեծ գորավար Ա. Վ. Սուվորովը, որը 1780-1781 թթ. գտնվելով Աստրախանում՝ նամակագրություն է ունեցել Ղարաբաղի հայ մելիքների հետ:

Ազատագրական պայքարը՝ ռուսական կողմորոշմամբ, 19-րդ դարի սկզբին հայոց մեջ դարձել էր անկասելի: Մեծ ակտիվություն են ցուցաբերում Դավիթ Բեկի իշխանության անկումից հետո Ղարաբաղից ու Չանգեզուրից Ղալար, Մոզդոկ և Ռուսաստանի այլ վայրեր գաղթած հայերը:

1801 թ. Ռուսաստանին են միանում Վրաստանը, Լոռին, Շավշաղինը, 1804-ին՝ Գանձակը, 1805 թ.՝ Ղարաբաղը: Մայիսի 14-ին Ղարաբաղի և Գանձակի սահմանագծի գլխին՝ Կյուրակչայ (Թնագետ) գետի ափին, վրանի մեջ ռուսական բանակի գեներալ Ցիցիանովը և Ղարաբաղի Իբրահիմ խանը ստորագրեցին դաշնագիր, որով Ղարաբաղի խանությունն այսուհետև հպատակվում էր Ռուսաստանին: Դաշնագրով սահմանն անցնում էր Ողջի գետով և Չանգեզուրի լեռնաշղթայով: Դա բացատրվում էր թուրք խանի երկդիմի պահվածքով: Ինչպես ցույց տվին իրադարձությունները, նա հետագայում բազմիցս խախտեց դաշնագիրը, հանդես եկավ մերթ պարսից, մերթ ռուսաց կողմից: Ձորքում աղոտ հիշողություն է պահպանվել, որ երբևէ ռուսաց և պարսից սահմանը եղել է Ողջի (Ուղուր) գետը: Մեղրու գավառակն անջատվեց Ղարաբաղի խանությունից և միացավ Ղարաբաղի խանությանը:

Ռուսաստանին միանալուց հետո ցարական արքունիքը չչտապեց վարչական նոր բաժանում անել ու բարելավել կառավարումը: Դա, թերևս, բացատրվում է ռուս-պարսկական հարաբերությունների չնվազող լարվածությամբ: Գավառակները շարունակում էին բաժանված մնալ մահալների, ինչը պահպանվեց մինչև 1822 թ., երբ խանությունը ստացավ Ղարաբաղի պրովինցիա անվանումը: Մահալները նախկինի պես



Վլադիմիր Մեծ

Մեծ իշխան Վլադիմիրը, երբ ցանկացավ որպես իր հաջորդ կին վերցնել արքայադուստր Աննային, բյուզանդական հայկական ծագմամբ կայսր Վասիլի (Բարսեղ) II (976-1025) բրոջը, բախվեց Աննայի հաստատուն պահանջին՝ ամուսնանալ Վլադիմիրի հետ այն պայմանով, եթե նա ընդունի քրիստոնեություն և վտարի մնացած կանանց:

Երբ 988 թ.-ին Վլադիմիրը համաձայնվեց Աննայի պայմանին, հայազգի բյուզանդական արքայադուստրը հավաքեց հայ հոգևորականներին՝ Ռուսաստանի մկրտության համար և Պոլսից հեռացավ Կիև: Դնեպրի ափերին տեղի ունեցավ Վլադիմիր Սվյատոսլավովիչի («Վասիլի» անունով քրիստոնյա) և Կիևի ռուս ժողովրդի մկրտությունը:

Թուրքմենչայի պայմանագիրը

Սկզբը՝ էջ 2

Ներողամիտ կարգադրությունից հանում է Հուսեյն Խանին, Երևանի Նախկին սարդարին, նրա եղբորը՝ Հասան Խանին և Նախիջևանի Նախկին Կառավարիչ Քերիմ Խանին:

Հոդ. 15. Նորին Մեծություն Շահը որդված իր Տերությունում խաղաղությունը վերականգնելու և իր հպատակներին այն ամենը հեռացնելու բարերար ու փրկարար մտադրությամբ, ինչը կարող է էլ ավելի մեծացնել պատերազմի բերած աղետները, պատերազմ, որն այնքան հաջող ավարտված է սույն պայմանագրով, Աղրեջան (Ատրպատական) կոչվող Մարզի բոլոր բնակիչներին և Աստիճանավորներին շնորհվում է բացարձակ ու կատարյալ ներում: Նրանցից ոչ ոք, ինչ աստիճանակարգի էլ պատկանելի լինի, չի կարող պատերազմի կամ ռուսական զորքերի կողմից հիշյալ մարզի ժամանակավոր գրավման ընթացքում իր արտահայտած կարիքների, արարմունքների կամ վարքի համար ենթարկվել հետապնդման, ինչպես նաև վիրավորանքի: Բացի դրանից, այդ Աստիճանավորներին և բնակիչներին կտրվի, այսօրվանից հաշված, միամյա ժամանակամիջոց, որպեսզի նրանք իրենց ընտանիքներով հանդերձ կարողանան Պարսկական Մարզից ազատ անցնել Ռուսական մարզերը, որպեսզի կարողանան դուրս կրել և վաճառել (իրենց) շարժական գույքը, առանց հանդիպելու Կառավարության կամ Տեղական իշխանությունների կողմից հարուցված որևէ արգելիչ: Այդ անձանց կողմից վաճառվող կամ դուրս տարվող գույքն ու իրերը չպետք է ենթարկվեն որևէ մաքսի կամ հարկի: Իսկ անշարժ գույքի նկատմամբ սահմանվում է հինգամյա ժամանակամիջոց՝ այն վաճառելու կամ նրա վերաբերյալ կամայական կարգադրություն անելու համար: Այս ներումը, սակայն, չի տարածվում այն անձանց վրա, որոնք մինչև միամյա ժամանակամիջոցը լրանալը կգործեն դատական պարտքի ենթակա որևէ հանցանք կամ ոճիր:

Վ. ՂԱՐՍԱՅԱՆ



ՍԵՐԳԵՅ ԳՈՐՈՂԵՑԿԻ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍԻՐՏԸ՝ ԱՐԱՐԱՏՅԱՆ ԴԱՇՏԱՎԱՅՐԸ ՀՆԱՐԱՎՈՐ ՉԷ ՊԱՇՏՊԱՆԵԼ՝ ԱՌԱՆՑ ԱՐՑԱԽԻՆ ՏԻՐԵԼՈՒ

1919 թ. ռուս գրող, հրապարակախոս, թարգմանիչ, հասարակական գործիչ Սերգեյ Գորոդեցկին *Кавказское слово* ամսագրում տպագրել է «Ղարաբաղ» հոդվածը, որն այսօր էլ ապշեցնում է իր արդիականությամբ ու հրատապությամբ:

Յուրաբանչյուր երկիր, յուրաբանչյուր ազգ ունի իր նվիրական ամրությունները: Երբ ժողովրդի պատմությունը բարեհաջող ընթացք է ստանում, դրանք վերածվում են մշակութային ու քաղաքական կյանքի առանցքի: Երբ ճակատագիրը հետապնդում է ազգին, այն դառնում է ազգային կյանքի պատվարը, հույսի կղզին, վերածննդի գրավակալը: Հայ ժողովրդի համար հենց այս վերջին դերն է ունեցել և շարունակում ունենալ Ղարաբաղ լեռնային շրջանը: Բնությունն ինքը հսկայական նշանակություն է տվել նրան: Այնտեղ՝ Ղարաբաղի անմատչելի բարձունքներում, որոնք Կարսի ու Ալանի լեռնաշղթաների շարունակությունն են, ավելի քան 2000 տարի հայ ժողովուրդը դիմակայում էր քոչվոր ցեղերի ճնշումներին՝ պահպանելով իր մշակույթը, իր ազգային դիմագիծը:

Ազգագրական առումով, տնտեսությամբ ու լեզվով միատարր լինելով՝ Ղարաբաղը Հայաստանի միջնաբերդն է դարձել, նրա արևելյան թևը: Այդպիսին էր նա անցյալում, այդպիսին է հիմա, այդպիսին կլինի ընդմիշտ, քանի որ Հայաստանի սիրտը, Արարատյան դաշտավայրը չի կարելի պաշտպանել՝ առանց տիրելու Ղարաբաղին: Դարերի ընթացքում ներխուժումների ալիքները բազմիցս են փչրվել Ղարաբաղի ժայռերին՝ ներթափանցելով միայն գետահովիտներով, այստեղ էլ, սակայն, երկար չեն մնացել: Սյունիքի մեկի-բուրջուրը, ինչպես կոչվել է Ղարաբաղը հիմա, մեկ անգամ չէ սեփական ուժերով դիմադրել թշնամուն: Պատմությունը կրկնվում է, ու վերջին անգամ դրա ականատեսները մեք ինքներս էինք:

Բնությունն ու պատմությունը կերտել են զարաբաղու վառ արտահայտված տեսակը: Աշխարհով մեկ սփռված զարաբաղցիներին ամենուր կարելի է հեշտությամբ ճանաչել: Գործունեության մեծ թափ, անձնուրաց քա-

չություն, ռիսկի դիմելու հակում, ինքնավստահություն, յուրատեսակ համառություն, շիտակ հաստատամտություն, ընտանեկան կենցաղում՝ նահապետական. ահա զարաբաղու համակրելի գծերը, որոնք ասես հայկական հնագույն առաքինությունների խտացումը լինեն՝ պատմության դաժանություններից ինչոր տեղ խամրած ու իրենց անաղարտ վիճակում Ղարաբաղում պահպանված: Վեհանձն, ամրակամ մարդիկ, ովքեր կյանքը փրկելու համար ծվարել են լեռներում, կոփվել լեռնային օդում ու անվստահ մնացել վարակներից, որոնց ենթակա են հարթավայրում ապրողները:

Հայաստանի ազգային հիշողությունն իր մեջ պետք է որ զարաբաղցիների ոչ քիչ կարկառուն անուններ ամփոփած լինի: Չկա մի բնագավառ, որտեղ նրանք չդրսևորել իրենց նախաձեռնողականությունն ու տաղանդը: Քաղաքականություն, գրականություն, հասարակական գործունեություն, առևտուր՝ այս ամենը նրանց համար գործունեության ասպարեզ էր ծառայում: Կարելի է բազմաթիվ օրինակներ բերել, սակայն, չհավակնելով ամբողջ պատկերը ներկայացնելուն, հիշենք միայն մի քանի անվանի զարաբաղցիների, որոնց անունները հայտնի են բոլորին. հասարակական գործիչներից իրենց ծննդով Ղարաբաղին են պարտական Արամ Փաշան (Մանուկյանը), Սաքո Սահակյանը, Ռազմի գործին Ղարաբաղը տվել է գեներալ Լազարևին, արդյունաբերությունը նույնպես իր շարքերում ոչ քիչ զարաբաղցիներ է ունեցել՝ զարաբաղցի էր, օրինակ, Կոստյա Համբարձումյանը: Գրականության մեջ նույնպես զարաբաղցիներ շատ կային: Լեոն, Մոսկվայում «Արմյանսկի վեստնիկ»-ի հրատարակող Ամիրովը, վերջապես, հայկական թերթերի մեծ մասը խմբագրում են զարաբաղցիները: Աշխարհին այդքան հայտնի տղամարդ գոր-



ծիչներ տված Ղարաբաղը կերտել կամ, ավելի ճիշտ, իր անաղարտ վիճակում պահպանել է նաև հին հայրուհու կերպարը, ում հոգեբանության ու կենցաղի մեջ շատ բան է անխաթար մնացել հայրիշխանության շրջանից: Իր մշակույթով ու կենցաղով հղկված՝ Ղարաբաղը մեր օրերում էլ չի արատավորել իր հնամենի փառքը: Ինչպես Թամբուրանի ժամանակներում, հավաքելով իրենց ջոկատները, մեղիքները պաշտպանեցին Ղարաբաղի անկախությունը: Շուշիի դրվագը չփոխեց Նուրի Փաշայի պարտության ընդհանուր պատկերը, և պաշտպանական գիծը հիմնականում անմատչելի մնաց, ինչպես Նախկին ներխուժումների ժամանակ:

Այդպիսին է Ղարաբաղի նշանակությունը Հայաստանի համար: Անկասկած, եթե նա կորցնի այդ նշանակությունը, ազգերի ինքնորոշման գաղափարը մեծապես կտուժեր: Եվ հակառակը՝ տիրելով Ղարաբաղին, Հայաստանը գորավոր մշակութային ուժի այնպիսի առատ ներհոսք կստանա, որը, ողողելով Հայաստանի ամայի տարածքները, կբեղմնավորի դրանք մշակույթով՝ այդպիսով իսկ ամբողջացնելով Ղարաբաղի բազմադարյա փառապանք պատմությունը:

Յուրաբանչյուր ժողովուրդ հիմա իրեն և փնտրում: Վերածնված ազգերի ողջ ապագան կախված է նրանից, թե արդյոք նրանք իրենց մեջ բավարար քանակի, այսպես ասած, ազգային մշակույթի թթիվոր կգտնեն: Նման պայմաններում բոլոր կենտրոնները, որտեղ այս կամ այն պատճառներով թանձրացել է մշակութային կյանքը, բացառիկ նշանակություն են ձեռք բերում: Այդպիսին է և Ղարաբաղի նշանակությունը Հայաստանի համար: Ընդհատ է, պատմությունը Հայաստանին ձգել է դեպի հարավ՝ դեպի տաք ծովը, և, հնարավոր է, այնտեղից կհորդեն այնպիսի ուժեր, որոնք Ղարաբաղը կվերածեն նոր Հայաստանի հյուսիսային ծայրամասի: Բայց այդ դեպքում էլ այն չի կորցնի իր նշանակությունը՝ որպես անձեռնմխելի ու դարձրվել թրծված մշակութային շտեմարան:

«Արաքսի միջանցք»-ին ծանոթանալուց հետո երիցս ակնհայտ դարձավ «Չանգեզուրի միջանցք»-ը խաբեական ծրագիր է և ընդդեմ Հայաստանի

Սկզբը՝ էջ 1

և ոչ մի խոսք միջանցքային տրամաբանության մասին:

Վերը շարադրվածը, իհարկե, նորություն չէ: Սակայն Իրանը, կարևորելով ու բնական համարելով Ադրբեջանի ու Նախիջևանի միջև կապը, առաջարկում է խնդրի լուծման իր տարբերակը: Խոսքն Արաքսի ճանապարհային միջանցքի մասին է, որը ձգվում է իր տարածքով՝ Արաքսի աջ ափով:

Արաքսի ճանապարհային միջանցքին և երեսուն տարի շարունակ գործող այդ մայրուղու՝ Ներկայումս ընթացող ընդլայնման աշխատանքներին ծանոթանալու նպատակով էլ «Սյունյաց երկրի» ստեղծագործական խումբը սեպտեմբերի 24-ին այցելեց Իրանի Իսլամական Հանրապետություն, ինչի մասին ավելի վաղ տեղեկացրել ենք ընթերցողին:

107 կմ երկարությամբ Արաքսի ճանապարհային միջանցքի 3 կմ-ը Ադրբեջանի տարածքով է անցնում, 44 կմ-ը՝ Հայաստան-Իրան սահմանի երկայնքով (Արաքսի աջ ափով, Իրանի տարածքով), մայրուղու 60 կմ-ը՝ իրանական Նորդուզից մինչև Ջուլֆա ընկած հատվածն է, որտեղից էլ (Ջուլֆայից) միջանցքը միանում է Նախիջևանի տարածքին:

Մեկ օրվա ընթացքում հնարավորություն ունեցանք ծանոթանալ միայն մայրուղու՝ Նորդուզ-Ջուլֆա 60 կմ երկարությամբ ճանապարհին, ինչպես և այնտեղ կատարվող շինարարական աշխատանքներին:

Ասեմք անմիջապես՝ մեծ ծավալի աշխատանքներ են իրականացվում մայրուղում՝ հարյուրավոր մեթրաների ու ճանապարհաշինական այլ մեխանիզմների, ինչպես և ուղիղի բազմաթիվ մասնագետների մասնակցությամբ:

Եղանք մոտ տասը շինարարական, իսկ երեք տեղ ակնատես եղանք նոր ու լայնահուն թունելների կառուցման աշխատանքներին: Օրինակ, «Նանավալ» կոչված վայրում՝ Ներկայումս գործող մայրուղու ամենառիսկային հատվածում, կառուցվող թունելը կունենա 700 մ երկարություն:

Արդյունքում՝ մոտ ապագայում, հնարավորություն կտրվի վարորդներին՝ ավելի ապահով ու անվտանգ երթևեկելու մայրուղով:

Վերականգնվող ու բարեկարգվող մայրուղին կունենա երթևեկության չորս գոտի՝ Ներկայումս գործող երկուսի փոխարեն:

Չուզահեռաբար ընդլայնվում են արդեն իսկ գործող ճանապարհային ենթակառուցվածքները:

Ուշագրավ են բեռնատար մեթրաների (և ոչ միայն) կայանատեղիները, որոնք ապահովված են (նման վայրերին բնորոշ) անհրաժեշտ բոլոր պայմաններով՝ արագ սննդի ապահովում, հանգստանալու, գիշերելու հնարավորություններ և այլ ծառայություններ:

Ասել է թե՛ Արաքսի ճանապարհային երթուղին կլինի միջազգային բոլոր չափանիշներին համապատասխանող, բարեհարմար ու անվտանգ նաև խոշոր բեռնատարների համար:

Ավելին, «Արաքսի միջանցք» ծրագրի ամբողջական իրականացման արդյունքում վերջնականապես անիմաստ կդառնան նաև Մեղրիի տարածքով երկաթուղային հաղորդակցության վերականգնման վերաբերյալ ադրբեջանաթուրքական բարբառանքները:

Իսկ թե՛ երբ ամբողջապես կիրականացվի «Արաքսի միջանցք» ծրագիրը, չկարողացանք ճշտել ոչ շինարարներից, ոչ էլ մեզ ուղեկցող ընկերներից: Դրան խանգարող լրջագույն մի հանգամանակ էր Նախիջևանի տարածքում շարունակվող շրջափակած է արևմտյան սանկցիաներով՝ դրանից բխող բոլոր հետևանքներով: Սյունյաց կողմից՝ վերաշինվող մայրուղին նաև գործող

ճանապարհ է, ինչը նշանակում է՝ կատարվող աշխատանքները չպետք է խոչընդոտեն մայրուղով իրականացվող չափազանց ակտիվ երթևեկությանը: Ուրիշ հանգամանակ՝ Ադրբեջանը պետք է կատարի իր ստանձնած պարտավորությունները՝ կապված «Արաքսի միջանցքի» հետ:

Այդ ամենով հանդերձ՝ կատարվող ճանապարհաշինական աշխատանքներն այնքան բուռն ու բազմաճակատ են, որ առաջիկա մեկ տարում միջանցքի մայրուղու կառուցումն ավարտված կամ ավարտման հանգրվանում կլինի, ինչը հավաստեցին մեզ հետ զրուցող շինարարները:

Արաքսի ճանապարհային միջանցքին ծանոթանալուց և կատարված ու կատարվող մեծածավալ ու բազմակողմանի աշխատանքները դիտարկելուց հետո պարզագույն հարցեր են առաջանում:



Եթե նման բարեհարմար, ապահով ու անվտանգ ճանապարհային միջանցքով (ինչպիսին «Արաքսի միջանցք» է) Ադրբեջանը կապված է Նախիջևանի հետ, ապա ինչո՞ւ են Ադրբեջանը, Թուրքիան, Արևմուտքն առաջ քաշել «Չանգեզուրի միջանցքի» գաղափարը:

Մենք, մեր մասնագիտական կոչման բերումով, հետևել ենք այդ գաղափարի շուրջ տեղի ունեցող զարգացումներին ու միշտ էլ կասկածներ ու վերապահումներ ունեցել:

«Արաքսի միջանցք»-ին տեղում ծանոթանալուց և մեզ հետաքրքրող հարցերը պարզաբանելուց հետո մեզանում ավելի հաստատուն դարձավ այն միտքը, որ «Չանգեզուրի միջանցքը» ոչ թե Ադրբեջանը Նախիջևանի հետ տրանսպորտային երթուղով կապելու խնդիր ունի, այլ Հայաստանը մասնատելու, արդեն իսկ անդամահատված Սյունիքը վերստին անդամահատելու, Հայաստանի և Իրանի միջև հազարավայրերով գոյություն ունեցող ճանապարհը շրջափակելու, Թուրքիան և Ադրբեջանը ցամաքային ճանապարհով միմյանց կապելու (թուրանական կամ պանթուրական ծրագիրն իրականացնելու), ՌԴ-ին տարածաշրջանից դուրս մղելու, Իրանի, Չինաստանի և ՌԴ-ի համար (մեր հաշվին ու մեր միջոցով) վտանգներ ստեղծելու ստույգ նպատակով:

Տեղին ենք համարում հիշել ու հիշեցնել նաև՝ պատմության մեջ «Չանգեզուրի միջանցք» կոչվող հասկացություն երբևէ գոյություն չի ունեցել: Ասել է՝ Բաբելոն ու Անկարայի այդ երկուսն էլ պատմական և իրավական որևէ հիմք չունին:

Մենք կարող ենք «Չանգեզուրի միջանցք»

խաբեական ծրագրի բուն էությունը բացահայտող շատ-շատ փորձագետների կարծիքներ կայացնել (մեր նկատառումներից զատ), բայց բավարարվենք իրանցի դոկտոր Զաքեմիի դիտարկումը՝ հիշեցնելով: Ըստ նրա՝ Ադրբեջանը Նախիջևանին կապելու խնդիր իրականում չկա, մասնավորապես որ «Արաքսի միջանցք» ծրագիրը տարանցիկ կապ է ապահովում և կապահովի այնպես, ինչպես Նախիջևանը տարվա ընթացքում:

«Ադրբեջանի և Հայաստանի տարածքային հակամարտությունը» խորագրով գիտաժողովում (20 դեկտեմբերի 2023 թ.) Միջազգային իրավունքի և ԵՄՍՄ հարցերով այդ փորձագետը նշել է. «Հայաստանի հարավից միջանցք ստանալու Բաբելոն պնդումը վերաբերում է այն

միջանցքը»:
Տվյալ հանգամանքը վերստին ցույց է տալիս, որ «Չանգեզուրի միջանցք» ասվածը մեծ դավադրություն է, այդ թվում և առաջին հերթին՝ Հայաստանի Հանրապետության հանդեպ:

Իրանական դիրքորոշման հայանապաստ նշանակությունը նվազեցնելու կամ նսեմացնելու ակնհայտ նպատակով ակնատես ենք նաև բարոզի, որը, կարծեք, գալիս է Ադրբեջանից ու Թուրքիայից:

Իբր իրանական տեսակետը կյանքի կոչման դեպքում Հայաստանը տարեկան կկորցնի 3-5 մլրդ դոլարի եկամուտ, որը կարող է

պարտավորություններին, որոնք Ադրբեջանն ունի լուրջնափոխական ճակատի հանդեպ, այն է՝ իրականացնելու ԱՍՏՈ-ի թուրանական միջանցքը և Կովկասում հաստատելու անվտանգ-սաքսոնական կարգը:

Մեր օրերում տեղի ունեցող գործընթացները ցույց են տալիս, որ Ադրբեջանն ու Թուրքիան շարունակում են իրենց օրակարգում պահել «Չանգեզուրի միջանցքի» ստեղծման դարավոր փափագը: Պարզապես, ժամանակ առ ժամանակ, շեշտադրումներն են փոխում տարածաշրջանում հետաքրքրություններ ունեցող երկրներին ու հասարակություններին ապակողմորոշելու համար:

Ադրբեջանը, ըստ էության, համաձայն է Արաքսի ճանապարհային միջանցքի ստեղծմանը, սակայն...

Դեռևս մեկուկես տարի առաջ Բաբելոն Իրանի դեսպանն էր հայտարարել. «Վերջին հանդիպումներում Իրանի և Ադրբեջանի դեկավարներն ընդգծել են Արաքսի ճանապարհային միջանցքի ստեղծման մասին համաձայնագրի իրագործման անհրաժեշտությունը, և Ադրբեջանի նախագահը կարգադրել է 8 մլն դոլար հատկացնել Ադրբեջան-Զալալե կամրջի նախագծի իրագործման համար, իսկ երկաթուղային կապը նույնպես կվերականգնվի ապագայում՝ Ադրբեջանի 500 մլն դոլարի ներդրմամբ»:

Այդ բոլորով հանդերձ, ադրբեջանական կողմը «Արաքսի միջանցքը» համարում է այլընտրանք, իսկ հիմնական երթուղին (նրանց պատկերացմամբ) պետք է լինի «Չանգեզուրի

ստանալ Ադրբեջան-Նախիջևան միջանցքը Սյունիքով անցկացնելու դեպքում:

Նաև Սյունիքում շրջանառվող այդ ասեկոսեի վերաբերյալ (մեր այցելության ընթացքում) կամեցանք իմանալ Կապանում ԻԻՀ գլխավոր հյուպատոս Մորթեգա Աբեդին Վարամիսի կարծիքը:

Ըստ հյուպատոսի՝ իրականությունն աղավաղելու փորձ է այդ ամենը: Իրանը դեմ չէ Սյունիքի տարածքով հաղորդակցության ուղիների վերաբացմանը: Իրանը պարզապես պնդում է՝ Սյունիքի տարածքով անցնող ցանկացած ճանապարհ պետք է լինի Հայաստանի ինքնիշխանության ներքո:

Խնդրո առարկային առնչվող մեկ ուրիշ հարց ևս ուղղեցինք Մորթեգա Աբեդին Վարամիսին՝ «ՀՀ վարչապետը հայտարարել է, թե Սյունիքի տարածքով անցնող ճանապարհը (վերաբացման դեպքում) պետք է ունենա նույն կարգավիճակը, ինչ-որ ունի Իրանի տարածքով անցնող և Ադրբեջանի երկու հատվածը միմյանց կապող ճանապարհը: Եվ, մեր որոշ վերլուծաբանների պնդմամբ՝ Իրանում դժգոհությամբ են ընդունել ՀՀ վարչապետի այդ հայտարարությունը»:

– Դա իրականությունը չի համապատասխանում, – ասաց պարոն հյուպատոսը: – ՀՀ վարչապետի հայտարարությունը Հայաստանի դիրքորոշումն է, որը բխում է Հայաստանի ինքնիշխանության շահերից, որը չի հակասում մեր երկրի դիրքորոշմանը:

**ՍԱՄՎԵԼ ԱՆԵՍՏԱՆՅԱՆ
ԼՈՒՍԱՆԿԱՐԱՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՆԱ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՆԱՆԻ**



Հանդիսավոր ցերեկույթ՝ նվիրված Գորիսի պետական քոլեջի հիմնադրման 100-ամյակին

Սյունյաց աշխարհի գեղեցկուհի Գորիսը հոկտեմբերի 11-ին տոնական տրամադրության մեջ էր. նշվում էր երկրամասի հնագույն և վաստակաբեռ մասնագիտական ուսումնական հաստատության 100-ամյակը, որը, հիրավի, տոն էր ամբողջ Սյունիքի համար:

Գորիսի Վաղարշ Վաղարշյանի անվան պետական դրամատիկական թատրոնի դահլիճում հավաքվել էին կրթօջախի ուսանողներ, դասախոսներ, նախորդ տարիների շրջանավարտներ, քոլեջի գործընկերներ և գործատու կազմակերպությունների, մտավորականության, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, մարզի միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների տնօրեններ, հյուրեր մայրաքաղաք Երևանից, մարզի շրջաններից, «Գորիսի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի խորհրդի անդամները՝ խորհրդի նախագահ Արարատ Լալաբեկյանի գլխավորությամբ:

Հանդիսավոր ցերեկույթը մեկնարկեց Հայաստանի Հանրապետության պետական օրհներգի հնչյունների ներքո:

Օրհնության խոսքով հանդես եկավ Հայ առաքելական եկեղեցու Սյունյաց թեմի առաջնորդական տեղապահ, հոգեշնորհ Տեր Մակար վարդապետ Հակոբյանը:

Այնուհետև ելույթներ ունեցան ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանը, Սյունիքի



մարզպետի տեղակալ Հայկ Հարությունյանը, Գորիսի փոխամայրաքաղաք Իրինա Յոլյանը, Գորիսի պետական քոլեջի տնօրեն Կարեն Լազարյանը, տարածաշրջանում ճանաչված մտավորական և հասարակական գործիչ Գագիկ Հայրումյանը, Գորիսի պետական քոլեջի «Քույրական գործ» մասնագիտության 1-ին

կուրսի ուսանողուհի Դիանա Առաքելյանը: Ելույթ ունեցողները հարգանքի տուրք մատուցեցին այն մանկավարժներին, ովքեր իրենց նվիրական աշխատանքով կերտել են քոլեջի մեկդարյա՝ հիրավի սիրական ուղին:

Նշվեց այն մեծ դերը, որ կատարել է կրթօջախը Սյունիքի ու Վայոց ձորի շրջանների, ինչպես և Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի կադրերի պատրաստման գործում:

Գորիսի մանկավարժական ուսումնարանի հարյուրավոր շրջանավարտներ կրթությունը շարունակել են մայրաքաղաքի բարձրագույն ուսումնական հաստատություններում, իսկ շատերը դարձել նշանավոր դեմքեր մեր ազգային կյանքում՝ հայ արձակուրդ, կերպարվեստում, կառավարման համակարգում, գիտության ոլորտում, ոմանք էլ բարձրացել են Գիտությունների ակադեմիայի անդամի պատվավոր պատվանդան:

Ցերեկույթի ընթացքում ցուցադրվեց հոբելյանի առիթով պատրաստված վավերագրական ֆիլմը՝ 20 րոպե տևողությամբ, որը հիմնականում արտացոլում էր կրթօջախի ներկայիս գործունեությունը (ֆիլմը պատրաստվել է Geographic.tv «Գործարար Հայաստան» հաղորդաշարի կողմից):

Տոնական միջոցառումը համեմվեց երաժշտական գեղեցիկ ելույթներով. Արկադիա Մարդյանը կատարեց Հովիկ Գևորգյանի «Ալպիական մանուշակը» նորաստեղծ երգը, «Մեծ Հայք» պարային համույթը հանդես եկավ Սայաթ-Նովայի «Լազանի» ստեղծագործությամբ:



յան մեղեդու ներքո պարային համարի կատարմամբ (զեղարվեստական ղեկավար՝ Համետ Իսախանյան), իսկ քոլեջի «Լուսանկարչական գործ» մասնագիտության 1-ին կուրսի ուսանողուհի Վանուհի Խաչատրյանը կատարեց Հայոց մեծ գուսան Աշոտի «Լուսնի շողը» երգը:

Օրը նաև գնահատանքի խորհուրդ ուներ, գնահատանք քոլեջի ներկայիս գործունեությանը, ներկայիս ղեկավարությանն ու դասախոսական անձնակազմին, մյուս աշխատակիցներին: Նշվեց, որ վերջին տարիներին մեր հասարակությունը, այդ թվում կրթական հաստատություններն անցել են հայտնի փորձությունների միջով: Եվ, այդուհանդերձ, քոլեջը կարողացել է պահպանել սեփական դիմագիծը, կարողացել է մնալ պահանջված: Պատահական չէ, որ ամեն տարի հանրակրթական դպրոցի 150 շրջանավարտ (միջին հաշվով) նախընտրում է սովորել Գորիսի պետական քոլեջում:

Գնահատանքի որոշակի դրսևորում էր փաստը, որ քոլեջի բազմաթիվ դասախոսների, նախարար Ժաննա Անդրեասյանի ձեռնարկով, հանձնվեցին ՀՀ ԿԳՄՍ նախարարության պատվոգրեր և շնորհակալագրեր:

Դասախոսներն արժանացան նաև Գորիսի համայնքապետարանի պատվոգրի:

Քոլեջի 100-ամյակի հանդիսավոր նշումը, սակայն, անցած փառավոր ուղին ոգեկոչելու և դրանով հպարտանալու միջոցառում չէր սուկ: Տոնական արարողությունը նաև կրթօջախի ներկա ընթացքը ներկայացնելու և ապագային միտված գործունեությունն ավելի հաստատուն ու հստակ դարձնելու, տարածաշրջանի աշխատաշուկայի պահանջներին առավել համահունչ դարձնելու ստույգ նպատակ ուներ: Դա արտահայտվեց մասնավորապես ՀՀ ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանի ելույթում: Նախարարը ներկայացրեց միջին մասնագիտական կրթության ոլորտում իրականացվող պետական քաղաքականության հիմնական ուղղությունները և հատկապես կատարվող բարեփոխումները, որոնց արդյունավորությունն արդեն իսկ նկատելի է:

Օրվա խորհուրդն այդ տեսանկյունից իմաստավորեց ու անցնելիք ճանապարհը կարևորեց նաև քոլեջի տնօրեն Կարեն Լազարյանը՝ նշելով. «Անցյալի գործե-



Նրով հայարտանալով, անցյալից մեզ փոխանցված ժառանգության հանդեպ պատշաճ պատասխանատվություն կրելով, այդուհանդերձ, կենտրոնացած ենք մեր ներկա ընթացքի ու խնդիրների վրա: Նշանավոր այս օրը վերաձայնում են շատերիս երազանքն ու համոզվածությունը՝ Գորիսի պետական քոլեջը դեռ տասնամյակների անցնելիք ճանապարհ ունի, քանզի նրա լուսառատ գործունեության կարիքը Սյունյաց աշխարհում և առաջին հերթին Գորիսի տարածաշրջանում զգացվում է այսօր, զգացվելու է նաև վաղը»:

Գորիսի պետական քոլեջի 100-ամյակին նվիրված տոնական միջոցառումը հրաշալիորեն վարեցին Արկադիա Մարոյանը և Նելլի Արզումանյանը: Նրանք ոչ միայն առաջնորդում-ուղղորդում էին արարողության ընթացքը, այլ դրվագ առ դրվագ ներկայացնում կրթօջախի 100-ամյա տարեգրության առավել ուշագրավ էջերը, ներկայիս ընթացքի ուշարժան իրողությունները:

Հանդիսավոր ցերեկույթն իրենց մասնակցությամբ պատվեցին նաև ՀՀ ԱԺ գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Սիսակ Գաբրիելյանը, ՀՀ ԱԺ պատգամավոր Դավիթ Դանիելյանը, ՀՀ պաշտպանության նախարարի խորհրդական Մելիքսեթ Պողոսյանը, Գորիս համայնքի ղեկավար Առուշ Առուշանյանը, Սյունիքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Մերի Գանդայանը, ճանաչված գործարարներ Սենիկ Չուկիսյանն ու Ժորա Ալեքսանյանը, Գորիսի պետական համալսարանի ռեկտոր Տիգրան Վանդունցը, ՀՀ ԿԳՄՍ նախարարության «Պատմամշակութային արժեքների պահպանման և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի տնօրեն Արմեն Հովհաննիսյանը, Հայաստանի գրողների միության Սյունիքի մասնաճյուղի նախագահ, բանաստեղծ Լևոն Սահակյանը, Սյունիքի տարածաշրջանային պետական քոլեջի տնօրեն Վրեժ Բաղդասյանը, Սիսիանի պետական քոլեջի տնօրեն Հրանտ Բաղդասյանը, Կապանի արվեստի պետական քոլեջի տնօրեն Աշոտ Խաչատրյանը, Կապանի պետական բժշկական քոլեջի տնօրեն Արաբայա Սարգսյանը, Քաջարանի արհեստագործական պետական ուսումնարանի տնօրեն Անուշ Հակոբյանը, Գորիսի գյուղատնտեսական քոլեջի տնօրենի պաշտոնակատար Աննա Տոռոզյանը, Գորիսի տարածաշրջանի հանրակրթական դպրոցների, ՆՈՒՅ-երի և Գորիս քաղաքի մշակութային հաստատությունների տնօրեններ:

Հոբելանսի շեմին ծնվել է Գորիսի պետական քոլեջի օրհներգը: Սյունյաց աշխարհի մերօրյա բանաստեղծ Տիգրան Գրիգորյանի խոսքով և կոմպոզիտոր Անուշ Ալեքսանյանի երաժշտությամբ արարված օրհներգի առաջին կատարողը եղավ ճանաչված երգիչ Արսեն Գրիգորյանը:

Ահա և օրհներգի տեքստը, որը, իրավամբ քոլեջի անցած ուղին համապարփակ արժևորելու և անցնելիք ճանապարհին ուղենշելու մի գեղեցիկ ստեղծագործություն է:

*Վարդապետական հայ դպրության
Դու նորոյա մեր մի ջանն ես,
Դու Գորիսի ուսումնական
Ամենահին մի օջախն ես...*

*Դու աշխարհին շանտ աննման
Կերպարներ ես մատուցանելու,
Քո սաները՝ նվիրական,
Մեծ դեմքեր են կյանքում դարձել...*

*Դու մարդկային ոգի թրծող
Մեր հայահունչ դարբնոցն ես,
Մերունդներին կյանք ուղեկցող
Մաշտոցաշունչ մեր հնրոցն ես...*

*Թող ընթացքը հավերժ լինի,
Դու՝ փառապանծ մեր սՆՆԵՐ օրրան,
Ուսման կարոտ սերունդների
Դու՝ Նահրյան մեր օրրան...*

Տոնական օրը, բնականաբար, շնորհավորանքների պակաս չկար...

Մենք նույնպես միանում ենք շնորհավորանքներին ու բարեմաղթանքներին՝ շնորհավոր տոնը՝ Գորիս, շնորհավոր տոնը՝ Սյունիք, շնորհավոր հոբելյանը՝ Գորիսի պետական քոլեջ:

**«ԱՅՈՒՆՅԱՑ ԵՐԿԻՐ»
ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐԸ՝ ՄԱՐԻԱՍ
ԼԱՀԱՐՅԱՆԻ
12.10.2024**



ԳՈՐԻՍԻ ԼՈՍԱՆԿԱՐՆԵՐԻ ԳՈՒՐՈՍԻ ԳՈՐԻՍԻ ԳՈՐԻՍԻ

Հոկտեմբերի 11-ին Գորիսի համայնքային պատկերասրահում տեղի ունեցավ «Գուրոս» Սյունիքը վավերագրողը» ցուցահանդեսի բացումը, որտեղ ներկայացվեց «Պատմամշակութային արժեքների պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի ֆոնդերում պահվող արվեստագետ Գուրոսի՝ Գուրգեն Պարոնյանի սև-սև կարտի հավաքածուից 80 լուսանկար:

Ընդ որում՝ Գորիս էր բերվել 180 լուսանկար, սակայն համայնքային պատկերասրահում հնարավոր եղավ ցուցադրել ոչ բոլորը՝ անհրաժեշտ մակերեսի բացակայության պատճառով:

Լուսանկարների մի մասը, որոնք երբևէ չեն հրատարակվել, կարևոր տեղեկություն են պարունակում Սյունիքի բնության և հուշարձանների, բնակավայրերի ու բնակչության մասին:

Ցուցահանդեսի բացմանը մասնակցում էին ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանը, ՀՀ ԱԺ գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Սիսակ Գաբրիելյանը, ՀՀ ԱԺ պատգամավոր Դավիթ Դանիելյանը, Գորիս համայնքի ղեկավար Առուշ Առուշանյանը, ՀՀ ԿԳՄՍ նախարարության «Պատմամշակութային արժեքների պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի տնօրեն Արմեն Հովհաննիսյանը:

Նույն ՊՈԱԿ-ի գիտահետազոտական բաժնի պետ Արգամ Երանոսյանը ներկայացրեց ցուցահանդեսի նկարները:

Ըստ արվեստագետի՝ «Գուրոսը լուսանկարել է խորհրդային շրջանի արդիականացման փուլը, երբ ավանդական տնտեսաձևից անցում էր կատարվում կոլեկտիվ տնտեսության: Լուսանկարել է նաև մարդկանց ապրելակերպն ու կացութաձևը, երբ բարանձավներից մարդիկ տեղափոխվում էին սարահարթ: Մանրամասնորեն վավերագրել է, թե ինչպես է զարգացել հին Գորիսը, ինչպես է ձևավորվել ժամանակակից բնակատեղին: Մի խումբ նկարներում էլ պատկերված են 1931-ի երկրաշարժի հետևանքները: Արիավիքը պատկերած լուսանկարները պահպանվել էին միայն Գուրոսի մոտ: Նա վավերագրել է նաև բնական աղետի պատճառով հուշարձաններին պատճառված վնասները: Մանրամասնորեն լուսանկարել է Սյունիքի գեղատեսիլ բնությունը, հատկապես ժայռերը, որոնց հետ կապված են բազմաթիվ առասպելներ ու պատումներ»:

Ցուցահանդեսի բացման ժամանակ առաջարկություն հնչեց Գուրոսի նկարներն ի պահ տալ Գորիսի համայնքային պատկերասրահին և ժամանակ առ ժամանակ դրանք մաս-մաս ցուցադրել: Առաջարկությունը, որբան հասկացանք, ի գիտություն ընդունվեց և

կրկնարկվի ԿԳՄՍ նախարարությունում: Ցուցահանդեսը կշարունակվի մինչև նոյեմբերի 15-ը, ասել է՝ գորիսցիները մեկ ամիս հնարավորություն կունենան ծանոթանալու իրենց մեծ հայրենակցի լուսանկարներին:

Ցուցահանդեսի բացման արարողությունը նախապես հայտարարված ժամը 15-ի փոխարեն տեղի էր ունեցել ժամը 11-ին: Ուստի և գորիսցիների մի մասը համայնքային պատկերասրահ այցելեց ժամը 15-ին, որից հետո, կարծեք, վաղօրոք տեղի ունեցած բացման արարողությունը շարունակվեց: Գուրոս արվեստագետի մասին ելույթներ ունեցան պատկերասրահի տնօրեն Ժորայր Մարտիրոսյանը, Ակսել Բակունցի տուն-թանգարանի վարիչ Վարդան Սարգսյանը, Հասմիկ Թունյանը, Գորիսի նախկին քաղաքապետ Նելսոն Ոսկանյանը:

Ցուցահանդեսի առաջին իսկ օրը մի քանի տասնյակ գորիսցիներ համայնքային պատկերասրահում էին...

* * *

Լուսանկարիչ, գեղանկարիչ, ՀԽՍՀ վաստակավոր նկարիչ Գուրոսի (Գուրգեն Գուրոսի) Պարոնյան-Հովսեփյանի) արվեստի մասին շատ թե քիչ ամբողջական պատկերացում կազմելու համար պատշաճ ենք համարում ներկայացնել նրա համառոտ կենսագրությունը:

Ծնվել է 1905 թ. սեպտեմբերի 28-ին, Գորիս քաղաքում: 1920-23 թթ. ծառայել է բանակում, 1927 թ. Գորիսում բացել գեղարվեստական լուսանկարչության սրահ: Երեսնական թվականների սկզբին Մոսկվայում բացվել է նրա լուսանկարների ցուցահանդեսը, որը մեծ ճանաչում է բերել արվեստագետին: Այդտեղ բարձր գնահատականի է արժանացել «Տաթևի վանքը» լուսանկարը, որի տակ մակագրել է «Գուրոս» ծածկանունը: 1939-ին և 1956-ին նրա աշխատանքները ցուցադրվել են Մոսկվայում Հայկական արվեստի

տասնօրյակների ցուցահանդեսներում: Գեղանկարչության մեջ մասնագիտացել է ինքնակրթությամբ՝ Փ. Թերլենդյանի խորհրդով: Ստեղծել է 300-ից ավելի կտավ, որոնց թեման հայրենի բնության անմիջական վերապատկերումն է: Նրա առավել նշանավոր գործերից են «Աշտարակի հին կամուրջը», «Պարզ առավոտ», «Ախթալա», «Երևանյան խաղող», «Գորիս», «Ձանգեզուր», «Հին խնձորենուկ» և այլն, ինչպես նաև մի շարք նատյուրմորտներ: Ավելի քան չորս տասնամյակ կապված լինելով հայրենի բնության հետ՝ նկարել է նաև մարդկանց աշխատանքային առօրյային առնչվող պատկերներ, կտավին փոխանցել միջնադարյան Հայաստանի բազմաթիվ վանքեր ու ճարտարապետական կոթողներ: Նրա արվեստը, որ բազմիցս ցուցադրվել է Երևանում ու Հայաստանի մի շարք քաղաքներում, իր հաստատուն տեղն ունի հայ կերպարվեստում և պատիվ է բերում թե՛ հեղինակին, թե՛ հայ գեղանկարչությանը: Մահացել է 1981 թ. ապրիլի 30-ին, Գորիսում:

Հ.Գ. Օրեր առաջ լույս է տեսել «Պատկեր և պատում. XX-րդ դարի Սյունիքը Գուրոսի լուսանկարներում» գիրքը, որի շնորհանդեսը տեղի է ունեցել Երևանում՝ Հայաստանի նկարիչների միությունում: Գրքի հեղինակն է Արգամ Երանոսյանը: Ըստ հեղինակի՝ Գուրոսն իր արժանի տեղն ունի այնպիսի լուսանկարիչների շարքում, ինչպիսիք են Արամ Վրոյրը, Արա Գյուլերը, Սեբաստիա Սալգադոն և ուրիշներ: Աշխատությունը կազմվել է պատմամշակութային արժեքների պահպանման և լուսանկարի հավաքածուի հիման վրա, որոնց մի մասն էլ՝ ժապավենները: Նկարների առաջին խումբը Գուրոսը լուսանկարել է 1920-30-ական թվականներին, երկրորդ խումբը՝ 1950-60-ական թվականներին: Գրքի մի քանի օրինակ տրամադրվել է Գորիսի համայնքային պատկերասրահին՝ վաճառքի համար:

**«ԱՅՈՒՆՅԱՑ ԵՐԿԻՐ»
ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐԸ՝ ՄԱՐԻԱՍ
ԼԱՀԱՐՅԱՆԻ**



Սպարապետ Նժդեհի հիշատակի օրն էր

1983 թ. հոկտեմբերի 7-ին, Խուստուկի լանջին գտնվող Կոզի աղբյուրի մոտ, հողին է հանձնվել Սյունիքի Սպարապետի մասունքների մի մասը:

Վայրը (այդ ժամանակվանից) սրբատեղի է դարձել ոչ միայն կապանցիների համար:

Ուխտավորների մեր խումբը (Սամվել Ալեքսանյան, Լեոնիդ Գրիգորյան, Վահրամ Օրբելյան, Լևոն Պետրոսյան) Բաղաբուրջում միացավ մայրաքաղաքից Կապան այցելած մեկ այլ խմբի, որը գլխավորում էր մեծահարգ ժորա Բարսեղյանը. վերջինս այն նժդեհապաշտներից է, ովքեր ժամանակին Լախաձենեցին Նժդեհի աճյունի տեղափոխումը Հայաստան:

Ուխտավորների խմբում էր նաև Արա Շահինյանը՝ «Միասնության դրոշ» Լախաձենեցիների Ներկայացուցիչը, ով որոշակի ներդրում ունի Ազգային պարի օրն առաջին անգամ Սյունիքում (Սիսիանում) կազմակերպելու գործում:

Ուխտավորների այդ խումբը Բաղաբուրջ էր հասել Նախօրեին և գիշերել հանգուցյալ Ստեփան Կարապետյանի տանը, որտեղ 1983-

ի հոկտեմբերին՝ որոշ ժամանակ, պահվում էր Սպարապետի մասունքը: Հենց նրա «Վիլիս» մեքենայով էին մասունքը Բաղաբուրջից տարել Կոզի աղբյուր:

Մենք խոնարհվեցինք Նժդեհի գերեզմանի առջև, վերհիշեցինք Սպարապետի գլխավորած Սյունիք-Չանգեզուրի հերոսամարտը:

Վերհիշեցինք նրա մարգարեությունը դարձած պատգամը՝ «Ոչ մի տեղ առանց Սյունիքի ու Արցախի. առանց աշխարհագրական Հայաստանի այդ խոշոր ողնաշարի մեր ամբողջական հայրենիքը գոյություն ունենալ չի կարող»:

Վերհիշեցինք այն երախտավորներին, ովքեր 1983-ին կատարել են Նժդեհի պատվիրանը և նրա սրբազան մասունքը հողին հանձնել Խուստուկի լանջին՝ Վարազ Առաքելյան, Գարեգին Մխիթարյան, Արցախ Բունիաթյան, Ժորա Բարսեղյան, Անդրանիկ Կարապետյան: Այնուհետև ժորա Բարսեղյանը հուշեր պատմեց այդ օրերին առնչվող մի շարք հանգամանքների մասին:

Ներկաները խնկարկեցին Գարգեին Նժդեհի հիշատակը:



Վերջում Արա Շահինյանի որդին՝ 6-րդ դասարանցի Հայկ Շահինյանը կատարեց Նժդեհի երգը՝ «Արագ ափին, ծնված ընկեր...» երգը: Հիշատակի ցերեկային ավարտվեց Ինքնավար Սյունիքի բալետի կատարմամբ, որը դարձյալ կատարեց Հայկ Շահինյանը. Մեր սարերն անառիկ և հպարտ,

Մեր որդիք կորույթի և անպարտ. Խոր ձորեր Սյունիքի ահավոր, Հիրիմ են թշնամու դարավոր:

Թշնամին հազարով միշտ մեր դեմ, Կուրծք կրծքի մենք կանգնած նրա դեմ, Չենք դողում, չենք սարսում մենք մահից, Մեր մահը թեթև թիթեռի թևից:

Ինքնավար Սյունիքին ցանկանք, Միշտ լինել թշնամու սպառնանք, Հատ ապրի մեզ համար այսուհետ, Բաշ հերոս Նժդեհ սպարապետ:

Երբ մենք հեռացանք Նժդեհյան սրբավայրից, այնտեղ դեռ ուխտավորներ կային:

Իսկ մեզ թվում էր, ինչպես Նախորդ ուխտագնացությունների ժամանակ, թե Խուստուկի անտառապատ լանջին, բարձր երկնքում մի արծիվ է թևատարած ճախրում... Հավանաբար Սպարապետ Նժդեհի անհանգստ հոգին է, որ մինչև այսօր թևածում է, ոչ միայն Սյունիքի, այլև Արցախի ու Նախիջևանի վրա...

Անպայման գալու է Նժդեհի հոգու հանգստության օրը...



«Կապանի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲԸ-ն մտադրությունների հուշագիր ստորագրեց Երևանի պետական համալսարանի հետ

«Կապանի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲԸ ընկերության գլխավոր տնօրեն Սասուն Ավետիսյանը և Երևանի պետական համալսարանի ռեկտոր Հովհաննես Հովհաննիսյանը 2024 թ. հոկտեմբերի 1-ին մտադրությունների հուշագիր ստորագրեցին, որով ընկերությունը և ԵՊՀ-ն կհամագործակցեն երկրաբանության, հիդրոերկրաբանության, հանքարդյունաբերության, մետալուրգիայի և այլ ոլորտներում մասնագետների պատրաստման, վերապատրաստման, որակավորման բարձրացման, գիտահետազոտական աշխատանքների կատարման և այլ ուղղություններով:

Հուշագիրը Կապանի լեռնահարստացման կոմբինատին հնարավորություն կտա առավել արդյունավետորեն օգտագործել ԵՊՀ գիտական ներուժն ինչպես ընկերության բնական գործունեության, այնպես էլ զարգացման ծրագրերի շրջանակներում ծագող գիտատար խնդիրների լուծման համար: Հուշագիրը նաև կարևոր է երկրաբանական հեռանկարում ընկերության անձնակազմը բարձրակարգ մասնագետներով համալրելու և մասնագետների սահուն սերնդափոխություն իրականացնելու տեսանկյունից:

«Կապանի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲԸ գլխավոր տնօրեն Սասուն Ավետիսյանը հուշագրի ստորագրմանը Լախորդած քննարկման շրջանակներում ներկա-

յացրեց կոմբինատում իրականացվող մասշտաբային բարեփոխումները և ներդրումային ծրագրերը՝ այդ տեսանկյունից կարևորելով նաև անձնակազմի մասնագիտական որակների բարելավման խնդիրը, որի լուծման անհրաժեշտ պայմաններից է պրոֆիլային կրթական հաստատությունների հետ ամենօրյա աշխատանքը: Սասուն Ավետիսյանը նաև նշեց, որ ընկերությունը հաստատակամ է մայր բուհի հետ համագործակցությունը երկարաժամկետ հեռանկարում ընդլայնելու և կրթական հաստատություն-արտադրություն կապն առավել ամրապնդելու հարցում:

ԵՊՀ ռեկտոր Հովհաննես Հովհաննիսյանը նշեց, որ ԵՊՀ-ն միշտ կարևորել է իր ուսանողների և հետազոտողների համար նոր հնարավորություններ ստեղծելը: Նրա խոսքով՝ Կապանի լեռնահարստացման կոմբինատի հետ այս համագործակցությունը հնարավորություն կտա ուսանողներին ստանալու գործնական հմտություններ, ինչն էական է նրանց մասնագիտական աճի և աշխատաշուկայում մրցունակ լինելու համար:

Կողմերը վստահություն հայտնեցին, որ հուշագրով սահմանված նպատակները համատեղ ջանքերով իրականություն կդառնան, և մեկնարկած համագործակցությունը կտա ակնկալվող արդյունքը:

02.10.2024 թ.



ՀՀ ՏԿԵ նախարարության, Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի և Երևանի պետական համալսարանի միջև համագործակցության հուշագիր կնքվեց

Ծաղկածրոմ ընթացող հանքարդյունաբերական միջազգային համաժողովի ընթացքում համագործակցության հուշագիր կնքվեց Հայաստանի տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության, Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի և Երևանի պետական համալսարանի միջև:

Փաստաթուղթն իրենց ստորագրություններով վավերացրեցին ՏԿԵ նախարար Գնել Սանտյանը, ՉՊՄԿ-ի գլխավոր տնօրեն Ռոման Խուզուլիյը և ԵՊՀ ռեկտոր Հովհաննես Հովհաննիսյանը:

«Ուրախ եմ, որ այս միջոցառումը տարեցտարի ընդլայնվում է, ընդգրկում է ավելի մեծ և կարևոր օրակարգեր: Մեզ համար՝ որպես կառավարություն, չափազանց կարևոր է այն, ինչ քննարկվելու ենք այստեղ: Հասկանալի, թե ոլորտն ինչ վիճակում է, ինչ խնդիրներ, հարցեր, մարտահրավերներ կան, ինչ զարգացումներ են սպասվում, ինչ տեխնոլոգիական հնարավորություններ կան, որոնք անհրաժեշտ է օգտագործել ոլորտում, և այս ամենն ինչ ազդեցություն կունենա ոլորտի և ընդհանրապես՝ մեր տնտեսության վրա», - ոլոր-

տի զարգացման տեսանկյունից կարևորելով փաստաթուղթը՝ նշեց Գնել Սանտյանը:

Նախարարն ընդգծեց, որ բոլոր երկրներում էլ հանքարդյունաբերության դերը հսկայական է՝ տնտեսության տվյալ ճյուղի, մյուս ճյուղերի հետ փոխկապակցության, արտահանման ծավալների և այլ առումներով:

«Ուրախ եմ նաև արձանագրել, որ համատեղ աշխատանքի արդյունքում նախորդ տարի վերջապես ունեցանք այս ոլորտի ռազմավարությունը: Իհարկե, որևէ փաստաթուղթ իդեալական չէ, միզուցե ընթացքում զգացվի շտկումների կարիք: Բայց, այնուամենայնիվ, առաջին անգամ ոլորտի ռազմավարություն ունենք, առաջիկա տասնամյակներին առաջ ընթանալու որոշակի տեսլականներ և պատկերացումներ ունենք: Կիևոլորտի, որ այս քննարկումները և շփումները նաև առիթ դառնան տեսնելու, թե մեր ռազմավարությունը ինչպիսին է և ինչ կարևոր չափանիշներ կան, որ ոլորտը պետք է ներգրավի և դրանցով առաջնորդվի», - Գնել Սանտյանը կարևորեց այս փաստաթուղթը՝ ոլորտի զարգացմանը նպաստելու տեսանկյունից:

27.09.2024 թ.

ԿՈՐԵԼ Է Գործի պետական համալսարանի 2018 թ. շրջանավարտ Անրի Արկադիայի Գրիգորյանի դիպլոմը՝ AB251603, գրանցման N 5280: Համարել անվավեր:

ԿՈՐԵԼ Է Կապանի բժշկական ուսումնարանի 1993 թ. շրջանավարտ Վարդան Մառնեհի Օհանյանի դիպլոմը՝ ԿՏ-1 ~ 258693: Համարել անվավեր:

Սյունյաց Երկիր
ՀԻՄՆԱԴՐԻ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓՈՎ ԿՐԻՍՏՈՍՏՈՍՅԱՆՍԿՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ: ՏՊԱԳՐՎՈՐՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ:
Գլխավոր խմբագիր՝ ՍԱՍՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

3301, Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան 20/32:
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47
syuniacyerkir@mail.ru
www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում և հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության և հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Կրթությունը ներկայացնելու մեքենագիր վիճակում:
«ԳՐՎԱԾԴ» - ԾԱՆՈՒԹՅՈՒՆ» բաժնում
տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:
Հղումը «Սյունյաց երկիրին» պարտադիր է: Թե նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր: Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:

Թերթը տպագրվում է «ԳԻՆԴ-ՏՊԱՐԱՆ» ՍՊԸ-ում: Հասցեն՝ 0074, Երևան, Բագրատուկյաց փող., 70ա շենք
Ծավալը՝ 3 տպագրական մամուլ: Տպաբանակը՝ 1010, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 21.10.2024թ.: